

ՅԱ.Ի. ՊԵՐԵԼՄԱՆ

ԴԱԿԵՏՈՎ ԴԵՊԻ
ՀՈՒՍԻՆԸ



087.1

Դ-51

ՊԵՏՀՐԱՏ · 1937 · ՅԵՐԵՎԱՆ

ଶ୍ରୀ ମହାପାତ୍ର
କବିତା




23 JUN 2009

087.1
Դ-51

ՅԱ. Ի. ՊԵՐԵԼՄԱՆ

ԴԱԿԵՏՈՎ ԴԵՊԻ ՀՈՒՍԻՆԸ


Թարգմ. Ն. Զիլեան



ԲՀ-ՏՎ 112

ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1937

Պատ. Խմբագիր՝ Ա. ՀԱՅՐՅԱՆ
Տեր. Խմբագիր՝ Մ. ՃԻՆԻՔԱԿՅԱՅԱՆ
Լեզվ. Խմբագիր՝ Հ. ԳԵՏՐՈՍՅԱՆ
Սրբագրիչներ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ, Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ



Հրատարակ. 3491
Տիքած 3000
Պատկեր 653



61142-67

Հանձնված ե արդագրության նոյեմբերի 13-ին 1936 թ. Ստորագրված ե
տպագրության մարտի 10-ին 1937 թ. Ծավալ 6 մամուլ. Ստատֆորմատ Ա-5.

Վոլգոկարագործական պատկերագիր Նոյեմբերի 13-ին 1936 թ. Ստորագրված ե
տպագրության մարտի 10-ին 1937 թ. Ծավալ 6 մամուլ. Ստատֆորմատ Ա-5.

ՀԵՇՈՒ ՅԵ ԱՐԴՅՈՒՆ ՄԻՆՉԵՎ ԼՈՒՄԻՆԵ

Մանկությանս ժամանակ ինձ թվում եր, վոր յեթե
տան կտուրը բարձրանամ, մինչև լուսինն այնքան ել հե-
ռու չենի։ Մի լուսնյակ յերեկո բարձրացա տանիքը,
մոտեցա փոքրիկ լուսամուտին և այդտեղից սկսեցի դե-
տել լուսինը։ Ցես կարծում եյի, թե լուսինը շատ մոտի-
կից կտեսնեմ։ Բայց ինչ պարզվեց։ Նա ելի առաջվա
նման բարձր կախված ե յերկնքից, մի խոսքով՝ կարծեք
նրա վրա ուղղակի գետնից ելի նայում։

— Կարծեմ դու ուղում ես լուսինը ձեռքով բռնել։ —
Ժիծաղելով ասաց մեծ յեղբայրս։

— Այ, յեթե ինձ հաջողվեր հրդեհաշեջ դիտանոցը
բարձրանալ, — պատասխանեցի յես, — այն ժամանակ բանն
այլ կլիներ։

— Միենույն ե՝ դիտարանն ել չեր ոգնի քեզ, — ասաց
յեղբայրս։ — Ցեթե գիտենայիր, թե մինչև լուսինը ինչքան
հեռու յե, այդ դեպքում նեղություն չեյիր կրի վորմե տեղ
բարձրանալու։

— Ուրեմն մարդիկ գիտեն, թե մինչև լուսինը ինչքան
հեռու յե։

— Իհարկե գիտեն։ Այդ հեռավորությունը վաղուց ե
չափված։

— Ուրեմն մարդիկ հասել են մինչև լուսինը:
 — Իհարկե վոչ: Այստեղ դեռ վոչ մի մարդ չի յեղել
 — Լուսնի վրա չեն յեղել, բայց հեռավորությունը չա-
 փել են... Յես չեմ հասկանում, թե ինչպես կարող ե այդ-
 պիսի բան լինել:

— Այս, մինչև լուսինը յեղած հեռավորությունը կարելի յե չափել և առանց նրա վրա բարձրանալու, այլ հենց ուղղակի յերկրի վրայից: Ուզում ես, յես վաղը կբացա-
 տրեմ քեզ, թե ինչպես են կատարում այդպիսի չափումները:

Սուավոտյան յեղբայրս ինձ հետ տանից դուքս յեկավ և մեր փոքրիկ քաղաքի մի քանի փողոցներից անցնելով՝ ինձ հասցրեց մի այնպիսի տեղ, վորտեղ կեչու բարձր ճյուղի վրա յերեսում եր սարեկի բունը:


— Կարող ես դու արդյոք չափել, — հարցըց յեղ-
 բայրս, — թե այդ բունը քանի մետր բարձրության վրա
 յե կախված:

— Յեթե բարձրանամ ծառը, — ասացի յես, — հասնեմ մինչև բունը և այստեղից մինչև գետինը մի պարան կախ տամ..

— Իսկ առանց ծառը բարձրանալու, — ավելացրեց յեղ-
 բայրս, — հենց այստեղ՝ գետի վրա կանգնած, և բացի այդ՝
 առանց վորեւ պարանի:

Յես այդ մասին շատ մտածեցի: Առանց ծառը բարձ-
 րանալու՝ ինձ միանգամայն անկարելի յեր թվում ընի հե-
 ռավորությունը վորոշել: Բայց այնուամենայնիվ յեղբայրս
 հանձն առավ այդ անելու: Նա գրպանից հանեց սպիտակ
 ստվարաթղթի յերկու փոքրիկ կտոր և մեկը տալով ինձ,
 պատվիրեց կեչուց քիչ հեռանալ: Իսկ ինքը վերցնելով
 յերկորդ կտորը՝ անցավ ծառի մյուս կողմը: Նա ստվա-
 րաթղթի կտորը մոտեցնելով աչքին՝ ծնկի յեկավ, վորպեսզի
 հավասարվի իմ բարձրությանը: Նրա ձեռքի ստվարաթղթի
 ցածր յեղըն ուղղված իր հենց դեպի ինձ: Փակելով մի աչքը՝
 նա մյուսով սկսեց բունը դիտել այնպես, վոր տեսողու-
 թյան գիծն անցնի ստվարաթղթի վրայով, և նա տեսողությունն
 գծի ուղղությամբ ստվարաթղթի վրա մի ուղիղ գիծ քաշեց:
 Տեղումս կանգնած՝ նույնը պետք ե անելի նաև յես:

Այստեղ ասածը դուք ավելի լավ կհասկանաք, յեթե
 ուղաղրությամբ դիտեք 7-րդ եջինկարի ներքեւ աջ անկյունը:



Նկ. 2.—Կարող ես դու արդյոք չափել, — հարցըց յեղբայրս, — թե այս բունը քանի
 մետր բարձրության վրա յե կախված:

Վերջացնելով այդ՝ յեղբայրս գրպանից հանեց չափելու ժամակինը և չափեց մեր կանգնած տեղերի միջև յեղած հեռավորությունը։ Դուրս յեկավ տասնմեկ մետր։

— Պատրաստ ե, — հայտարարեց յեղբայրս, — հիմա կարելի յե տուն գնալ։

— Ինչպես թե, հապա բարձրությունը, — հիմաթափված հարցրի յես, — չե՞ վոր դու պատրաստվեցիր սարեկի բնի բարձրությունը չափել։

— Հենց զրա համար ել տուն ենք գնում։ Այնտեղ կիմանանք այդ, իսկ այստեղ մեզ այլևս վոչինչ չի մնում անելու։

Ինձ այդ բոլորը չափազանց տարորինակ եր թվում։ Ի՞նչպես կարելի յե, վոր մարդ իր սենյակում նստած՝ կարողանա քաղաքից դուրս ինչ-վոր տեղում գտնվող ծառից կախված բնի բարձրությունը չափել։


Հետաքրքրությամբ սպասում եյի յես, թե ինչ ե անելու նա տանը։

Յեղբայրս սկսեց այն բանից, վոր նախ թղթի վրա տամանմեկ սանտիմետր յերկարությամբ մի ուղիղ գիծ քաշեց։ Դիի ծայրերին նա տեղափորեց մեր ստվարաթղթի կտորները, ինչպես այդ ցույց ե արված նկարում (տես 9-րդ եջում)։ Ստվարաթղթերի վրա յեղած գծերը շարունակեց, մինչև նրանք միմյանց հանդիպեցին թղթի վրա, և չափեց հատման կետից մինչև ցածի գիծը յեղած հեռավորությունը։

Իհարկե յես այնքան ել բան չհասկացա, թե այդ բոլորն ինչներ յե անում և թե ինչպես այստեղից կարելի յե իմանալ լավտերի բարձրությունը։

— Ահա տեսնում ես, — մատը դնելով գծագրի վրա՝ բացարեց յեղբայրս, — տամանմեկ սանտիմետր յերկարությամբ ներքին գիծն իմ և քո աչքերի միջև յեղած հեռավորությունն ե, յերբ մենք կանգնած եյինք կեչու մոտ։ Միայն այդ հեռավորությունը յես փոքրացրել եմ. տեղում այդ տարածությունը տամանմեկ մետր եր, իսկ յես թղթի վրա վերցրել եմ այնքան սանտիմետր, վորքան մետր հեռավորությունն եր, այսինքն տամանմեկ մետրին տասնմեկ սանտիմետր։ Իսկ ահա այս այն ուղղությունն ե, վորով մենք գիտում եյինք ըունը, վորը կախված ե այս յերկու գծերի հանդիպման կետում։ Այդ տեղից մինչև ներքեւ գիծը յեղած հեռավորությունը կլինի բնի բարձրությունը, միայն

վոչ թե ուղղակի գետնից հաշված, այլ իմ և քո աչքերի միջև յեղած ուղիղ գծից։ Հիմա գծագրի վրա քանի սանտիմետրը վոր կազմում ե այդ տարածությունը, այդքան մետր բարձրության վրա յել կախված ե բունը։ Զե՞ վոր գծագրի յուրաքանչյուր սանտիմետրը համապատասխանում է փողոցի մեկ մետր տարածությանը։ Յեթե մեր գտած բարձրության վրա ափելացնենք նաև քո բարձրությունը, այդ դեպքում մենք կիմանանք այն, ինչ վոր ուղում եյինք։ Հասկացա՞ր:



Նկ. 3. Թե ինչպես յեղբայրս անը ափարտեց բնի բարձրությունը չափելը։

— Բայց այդ բավականին հեշտ ե։

— Իսկ հիմա հասկանում ես արդեն, թե ինչ ձեզ գիտնականները կարողացան չափել մինչև լուսինը յեղած հեռավորությունը՝ առանց նրա վրա բարձրանալու։

— Իհարկե, գիտնականները մեկը մյուսից հեռու տեղերից գիտել են լուսինը և նշել դիտողության ուղղությունն այնպես, ինչպես մենք։

— Այն, միայն թե նրանք այդ այնպես հեշտ ու հասարակ ձեռ չեն արել, ինչպես մենք արինք։ Յերկու գիտնականների միջև յեղած տարածությունը վոչ թե տասնմեկ մետր ե յեղել, այլ մի քանի հազար կիլոմետր, իսկ անկյունները վոչ թե ստվարաթղթի վրա յեն գծել, այլ չափել են շատ նուրբ գործիքներով, և այդ պատճառով ել ստացված արդյունքներն ավելի վսահելի յեն յեղել։

— Հավ, իսկ այդ բոլորից հետո ի՞նչ պարզվեց: Ինչ-քան ե մինչև լուսինը:

— Սոսկալի՛ հեռու յե, կլորացրած թվով՝ չորս հարյուր հազար կիլոմետր: Դու գիտե՞ս, վոր Մոսկվայից մինչև Լենինգրադ ընդամենը վեց հարյուր քառասուն կիլոմետր ե, իսկ մեզնից մինչև լուսինը՝ չորս հարյուր հազար կիլո-մետր: Այնպիսի մի տարածություն ե այդ, վոր վեց հարյուր անգամ ավելի հեռու յե՝ քան Մոսկվայից Լենինգրադը Յեթե յերկրագունդն այնքան մեծ լիներ, վոր նրա վրա իրարից այդքան հեռու յերկու քաղաքներ լինելին, այդ դեպքում գիտե՞ս թե մի քաղաքից մինչև մյուսը գնացըը ինչքան ժամանակում պետք ե սլանա:

— Մի ամբողջ շաբաթում, — փորձեցի գուշակել յես

— Հապա մի փոքր լուրջ դատիր. Մոսկվայից մինչև Լենինգրադ արագընթաց գնացքը գնում ե մոտ տասը ժամում: Յեթե հետավորությունը վեց հարյուր անգամ ավելի յե, ուրեմն գնալու համար եթվեցհարյուր անգամ շատ ժամանակ ե հարկավոր: Այդ նշանակում ե, վոր այդ տարածությունն անցնելու համար հարկավոր կլինի վեց հազար ժամ: Այդ անում ե յերկու հարյուր հիսուն որ կամ ութ ամսից քիչ ավելի: Ահա թե մինչև լուսինն ինչքան հեռու յե: Դե, սիրելիս, հիմա ի՞նչ ես կարծում, լուսինն ավելի մոտից տեսնելու համար արժե՞ այդյօք բարձրանալ հրդեհաշեջ դիտանոցը:


Յես ծիծաղեցի:

Յեղբայս շարունակեց.

— Յերկրագնդի վրա չկա մի այնպիսի աշտարակ, վորի գաղաթից լուսինը գեթ մի փոքր չափով ավելի մոտ յերեար, քան նա յերեսում ե յերկրի մակերեսից:

— Իսկ Փարիզի Եյֆելյան աշտարակը, — հարցրի յես. — Չե՞ վոր նա ամպերից ել բարձր ե:

— Այս, պատահում ե, վոր նրա գաղաթը ծածկվում ե ամպերով: Բայց դու յերեկի կարծում ես, վոր ամպերը շատ բաձր են լողում: Այդ սխալ ե. Նրանց բարձրությունը յերեք չի կարելի լուսնի բարձրության հետ համեմատելու Այն ամպերը, վոր յերբեմն ծածկում են Եյֆելյան աշտարակի գաղաթը, յերեք յերեք հարյուր մետրից ավելի բարձր չեն լինում: Անձրեւ գալիս ե յերկու կիլոմետր բարձրությամբ



Նկ. 4. Լուսինի վրա գնալու համար ինչքան ժամանակ ե հարկավոր, յեթե հարկավոր լիներ այդ աշտածությունն անցնել գոտով, ձիով, ավտոմոբիլով՝ շոգեկառքով կամ սականակով:

Իողացող ամպերից, իսկ փետրաձև յերեացող ամենաբարձր ամպերը մեղանից ութից — տաս կիլոմետր բարձրության վրա յեն գտնվում։ Այս բոլորը չնշին հեռավորություններ են չորս հարյուր հազար կիլոմետրի համեմատությամբ։ Եյֆելյան աշտարակը յերեք հարյուր մետր բարձրություն ունի։ Ինարկե, յեթե բարձրանաս նրա գագաթը, քեզ կթվա, վոր գետնից սարսափելի բարձր ես գտնվում։ Այնտեղից գետնի վրայով անցնող մարդիկ մըջյունների չափ կերևան։ Բայց թեկուզ այդ աշտարակը յերեք անգամ ավելի բարձր լիներ, այդ դեպքում նա նորից չորս հարյուր հազար անգամ ավելի ցած կլիներ, քան մեր գլխավերնում դանդաղորեն սահող լուսինը։ Յերեակայիր, վոչ թե չորս հարյուր անգամ, այլ չորս հարյուր հազար անգամ։ Յերբ առարկան ժոտենում ե իր հեռավորության միայն չորս հարյուր հազարերորդական մասով, միթե կարելի յե այդ առարկան աչքով տեսնել։

— Բայց յեթե լուսինն այդքան հեռու յե, — հարցրի յես, — այդ դեպքում ճիշտ ե, վոր նա այնքան ել փոքր չպետք ե լինի, ինչպես այդ թվում ե մեզ։

— Ի՞նչ մեծության կլինի նա քո կարծիքով։

— Ինձ թվում ե՝ ափսեյի մեծության կլինի։

— Ի՞նչ, ափսեյի մեծության։ Դե լավ, այսոր յերեկոյան քեզ հետ միասին կչափենք լուսնի մեծությունը։

ԻՆՉ ՄԵՇՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԼՈՒՍԻՆԸ


Ուշ յերեկոյան յեղբայրս ինձ տարավ քաղաքից դուրս, հեռու տարածվող դաշտի տափարակը։ Մութ յերկինքը ջինջ եր և արդեն սկսել եր արևելքից հետզինտե լուսավորվել։

— Շուտով դուրս կգա լրիվ լուսինը, — ասաց յեղբայրս՝ ցույց տալով արևելքը, վորտեղ մեր առաջնկարվում եր գործարանային սև ծխնելույզը։

— Այնտեղ, գործարանի յետելից։

— Այս Յեղ այն ժամանակ դու կիմանաս, թե ինչպես մարդիկ կարողացան լուսնի տրամադիծը չափել։ Դու տեսնում ես այն գիծը, վորտեղ կարծես յերկնակամարը միանում ե յերկը հետ։ Այդ գիծը կոչվում նորիզոն։

Ինարկե դու զիտես, վոր հորիզոնը յերկը սահմանը չե, այլ այն բանի սահմանը, ինչ վոր աչքը տեսնում ե։ Հին ժամանակներում մարդիկ կարծում եյին, վոր յերկիրը կլոր մատուցարանի նման հարթ ե։ Հավատում եյին, վոր կարելի յե հանել այդ մատուցարանի սահմանին, այնտեղ, կարելի ի հանել այդ մատուցարանը միանում ե յերկը հետ, և գլուխը դուրս հանել յերկնային գմբեթից։ Հիմա յերեխաներն ել



Նկ. 5. Հին ժամանակներում մարդիկ հավատում եյին, վոր կարելի յե հանել մինչև յերկը ծայրը և նոյնիսկ գույխը հանել յերկամարից։ (Այս նկարը վերցված ե մի հնադարյան գրքից)։

զիտեն արդեն, վոր յերկիրը վոչ մի սահման չունի, վոր նա վոչ թե մատուցարանի նման ե կլոր, այլ գնդակի նման Յերկնակամար գոյություն չունի։ միայն մեզ թվում ե վոր յերկիրը ծածկված ե յերկնային գմբեթով։

— Իսկ յեթե մինչև հորիզոնը հասնե՞նք։

— Բոլորովին հնարավոր չե հորիզոնին հասնել, ինչքան ել վոր դու զնաս, միշտ ել հորիզոնը քեզնից կիսունա-

Հորիզոնը այն վայրն ե, վորտեղ մեր տեսողության զիծը սահում ե յերկրագնդի կորությունից և անցնում յերկնային տարածությունը։ Հարթ վայրում կանգնած չափահաս մարդն իր շրջապատը տեսնում ե հինգ կիլոմետր տարածության վրա. հենց այդ ել կիխի հորիզոնի հեռավորությունը. Յեթե բարձր տեղ յենենք, այդ գեպքում հորիզոնը կիսուանա: Կարճահասակ մարդու համար հորիզոնն ավելի մոտ ե:

— Իսկ ինձ համար:

— Յես արդեն հաշվել եմ, վոր այդ հասակով դու հորիզոնը պետք ե տեսնես չորս կիլոմետր հեռավորության վրա: Գործարանը յերեսում ե քեզ հենց հորիզոնի վրա — ուրեմն մեր մոտից մինչև այնտեղ չորս կիլոմետր ե: Յեթե յես քո բարձրության ցատկեմ, յես ել քեզ պես գործարանը հորիզոնի վրա կտեսնեմ... Բայց տես, լուսնի յեզրն ել յերեաց:

— Յես չեմ տեսնում:

— Այդ նրանից ե, վոր քո հասակը ցածր ե: Ինձ համար հորիզոնը մեկ կիլոմետր ավելի հեռու յե գտնվում, և ինձ յերեսում ե այն, ինչ դու դեռ չես տեսնում:

Մի փոքր անց՝ յես ել տեսա հորիզոնից դուրս յեկող լուսնի լուսավոր շրջապծի ծայրը:

Շուտով լուսինն ամբողջապես դուրս յեկավ հորիզոնից յերկնքի վրա, և գործարանի մեջ ծխնելույզի հետեւում դարձավ զեղին պղնձագույն մի մեծ բոլորակի: Լուսնի լուսավոր յերեսի վրա շատ պարզ յերեսում եր ծխնելույզը և տեղափորփած եր լուսնի բոլորակի հենց մեջտեղը:

Գործարանի ծխնելույզն ու լուսնի տրամագիծը կարծես միենույն մեծության լինեն, — ասացի յես:

— Այ, բանն ել հենց այդ ե: Հենց դրա համար ել քեզ բերել եմ այստեղ, վորպեսզի տեսնես: Իսկ ձիշտն ասած՝ ինչ ես կարծում դու, լուսինն ու ծխնելույզը միենույն մեծությունն ունեն:

— Լուսինը հեռու յե, ուրեմն նա ավելի մեծ պետք ելինի:

— Իսկ քանի՞ անգամ:


— Այնքան անգամ մեծ, վորքան անգամ հեռու յե:

— Դու արդեն յերկու հեռավորություններն ել գիտես,

թե մինչև ծխնելույզը և թե մինչև լուսինը: Դե պատկերացը, թե լուսնի տրամագիծը քանի անգամ մեծ ե ծխնելույզի բարձրությունից:

Յես ոկտեցի ստքումս հաշվել.

— Մինչև ծխնելույզը չորս կիլոմետր ե, մինչև լուսինը՝ չորս հարյուր հազար կիլոմետր: Լուսինը հեռու յե հարյուր հազար անգամ: Ուրեմն նրա տրամագիծի յերկարությունն ե ծխնելույզից հարյուր հազար անգամ յերկար պետք ելինի:



«Կ. 6. Թե ինչպիս կարելի յե գործարանային ծխնելույզից ոգտելով չափել լուսնի մեծությունը»

— Ճիշտ ե: Հիմա քեզ կասեմ ծխնելույզի յերկարությունը:

— Վորտեղից գիտես դու:


— Այսոր ցերեկը յես դիտմամբ գնացի գործարան և այնտեղից վորոշեցի նրա բարձրությունը: Գետնի վրա մի ձող ուղահայաց տնկեցի և նրա ստվերը չափեցի: Ինչքան անգամ ձողի ստվերը կարծ ե ծխնելույզի ստվերից, այնքան անգամ ել նա ցածր ե հենց ծխնելույզից:

— Ինչ բարձրություն ունի ծխնելույզը:

— Յերեսուն հինգ մետր: Յեկ հենց այն ժամանակ

ել յես հաշվեցի, վոր նա քո աչքում հորիզոնի վրա պետք
ե ծածկի լուսնի տրամագիծը:

— Հիմա արդեն յնս ինքս կարող եմ հաշվել, թե ինչ
մեծություն ունի լուսնի տրամագիծը, — ավելացրի յես: —
Պետք ե յերեսուն հինգը բազմապատկել հարյուր հազա-
րով: Սկզբում բազմապատկում եմ հազարով — ստանում



Նկ. 7. Թե ինչ մեծություն ունի լուսնի շրջագիծը՝ Սֆրիկա մայր ցամաքի համեմատությամբ! (Սակայն պետք ե նկատի ունենալ, վոր լուսնի գնդի ամբողջ մակերեսը մեծ է: Նա ավելի շատ քառակուսի կիլոմետրների թիվը համարյա թե նույն է: Իսկ դու գիտե՞ս, վոր Ասիան մի հսկայական մայր ցամաք է: Նրա վրա յե ապրում մարդկության համարյա կեսից ավելին, նրա վրայով հոսում են ջրառատ գետեր, անցնում են բարձր լեռնաշղթաներ, տարածվում են հսկայական պտղաբեր դաշտեր և համարյա նույնքան ել ընդարձակ անապատներ...)

եմ յերեսունհինգ հազար մետր կամ յերեսունհինգ կիլոմետր: Այդ թիվն այսուհեե բազմապատկում եմ հարյուրով — ստանում եմ յերեսունհինգ հարյուրավոր, կամ յերեք և կես հազար կիլոմետր:

— Ճիշտ ե: Ահա թե ինչպես մենք իմացանք լուսնի տրամագծի յերկարությունը. յերեք և կես հազար կիլոմետր: Լավ ափսե յե, հա:

Յես այնքան եյի զարմացած այդ արդյունքներով, վոր յեթե հաշվումներն ինքս կատարած չլինեյի, այդ զեպքում չպիտի հավատայի: Այսպես, ահա թե ինչ մեծություն ունի լուսնի գունդը: Նրա տրամագիծն ընդամենը չորս անգամ ե փոքր յերկարնդի տրամագիծից:

— Դու համոզվեցիր հիմա, — ասաց յեղբայրս, — վոր լուսինը վոչ թե ափսե յե, այլ մի ամբողջ աշխարհ: Լուս-
նի գնդի շրջագիծն Ս.Փրկիկայի լայնքին ե հավասար,
բայց նրա լրիվ մակերեսութն այդ մայր ցամաքից մեծ է: Գիտնականները հաշվել են, վոր լուսնի գնդի լրիվ մակե-
րեսն իր ընդարձակությամբ միայն քիչ յետ ե մուռմ
Ասիայից: Թե մեկի և թե մյուսի քառակուսի կիլոմետր-
ների թիվը համարյա թե նույն է: Իսկ դու գիտե՞ս, վոր
Ասիան մի հսկայական մայր ցամաք է: Նրա վրա յե ապրում
մարդկության համարյա կեսից ավելին, նրա վրայով հոսում
են ջրառատ գետեր, անցնում են բարձր լեռնաշղթաներ,
տարածվում են հսկայական պտղաբեր դաշտեր և համարյա
նույնքան ել ընդարձակ անապատներ...

— Իսկ լուսնի վրա, — հարցրի յես:

61142-62


ԼՈՒՍՆԻ ԿԱՌՈՒՑՎԱՇՔԸ

— Դու հարցնում ես, թե ինչպես ե կառուցված լուսնի
մակերեսութը, — ասաց յեղբայրս, յերբ մենք սկսեցինք
տուն գնալ: — Գիտնականներն այդ մասին գիտեն միայն
այն, ինչ վոր կարելի յե յերկի վրայից հեռադիտակներով
ղետեր: Հեռադիտակները լուսինը մոտեցնում են մեր աչե-
րին, բայց անբավար չափով են մոտեցնում: Ամենառուժեղ
հեռադիտակներն անգամ լուսինը մոտեցնում են այնքան,
վորքան նա կերեար հասարակ աչքով մի քանի հարյուր
կիլոմետր հեռավորությունից ղետելիս: Արդյոք շատ բան
կարող ես տարբերել այդպեսի մեծ հեռավորությունից:

— Այնուամենայնիվ ինչ են տեսել գիտնականներն
այստեղ:

— Լուսնին հեռադիտակով նայելիս, այն ել նույնիսկ
թույլ հեռադիտակով, անմիջապես յերեսում ե, վոր լուսինը
լեռնային յերկիր ե: Լուսնի գնդի համարյա ամբողջ մակե-
րեսը կտրտված ե լեռներով, ամբողջ լեռնաշղթաներով և

առանձին փոքր ու մեծ լեռների բազմությամբ։ Դրանք արևի ճառագայթներով լուսավորվելիս նկատելի ստվերներ են գցում և այդ ստվերներով գիտնականները չափել են լուսնի լեռների բարձրությունը։ Պարզվել ե, վոր նրա վրա բավականին բարձր — յոթ կիլոմետր և ավելի բարձրություն ունեցող — լեռներ կան։ Յերկրագնդի վրա՝ Ասիայում ամենաբարձր լեռն Եվլիբեստն ե, վորի բարձրությունը համարյա հասնում ե ինն կիլոմետրի։ Բայց չե՞ վոր լուսինը




Նկ. 8. Ի՞նչ կարելի յի տեսնել լուսնի վրա հեռագիտակող նայելիս։

փոքր և յերկրագնդից։ Լուսնի գնդի վրա յոթ կիլոմետրանոց լեռն ավելի մեծ անհարթությունն են ներկայացնում, քան ինն կիլոմետրանոց լեռը յերկրագնդի վրա։ Լուսնի լեռների մեծ մասն ողակի ձև ունեն, վորը շրջապատում են ներքին գոգավորությունը։ Յերկրագնդի վրա այնպիսի մեծ ողակավոր լեռներ չկան, ինչպես լուսնի վրա։ Լուսնի այդ ողակավոր լեռներից մի քանիսն ունեն հարյուր, հարյուրիսուն և ավելի կիլոմետր տրամագիծ։ Կա այնպիսի

լեռ, վորն այնքան տարածություն ե գրավում, ինչքան Հադոգայի լիճը։ Յերբեմն լուսնի լեռների գոգավորության միջից բարձրանում ե մի ուրիշ լեռ, բայց նա իրեն շրջապատող պատճեշից բարձր չի լինում։

- Կարելի՞ յե այդ լեռներն առանց հեռադիտակի տեսնել։
- Վոչ, հասարակ աչքով չեն յերեսում։



Նկ. 9. Լուսնի մակերեսի մի մասը, վորը յերեսում ե ուժեղ հեռադիտակով։ Ֆերեսում են լեռնաշղթաներ, առանձին ողակավոր լեռներ և «ծով» կոչվող նոնդարձակ հարթավայրեր։

— Իսկ այն ինչ մոխրագույն բծեր են, վոր յես տեսնում եմ նրա վրա։

— Դրանք ընդարձակ մութ տարածություններ են։ Հին ժամանակվա գիտնականները դրանց «ծովեր» եյին անվանում։ Դրանցից հետո այդ անունը մինչև հիմա յել մնացել ե, չնայած վաղուց պարզվել ե, վոր դրանք չոր հարթավայրեր են։ Լուսնի վրա վոչ ծովեր կան, վոչ ովկիանուններ և վոչ ել գետեր, նրա մակերեսի վրա առհա-

սարակ ջուր չկա: Նույնիսկ մի փոքրիկ ամպ ել չկա: Այստեղ յերբեք անձրև կամ ձյուն չի լինում:

— Իսկ ինչո՞ւ լուսնի վրա ջուր չկա:

— Դրա պատճառն այն ե, վոր լուսինը մթնոլորտով շրջապատված չե: Վորտեղ ոդ չկա, այնտեղ ջուրն անմիշապես պետք ե գոլորշիանա: Բայց գոլորշին ել լուսնի վրա մնալ չեր կարող. նա պետք ե ցնդեր յերկնային անծայրածիր տարածության մեջ, ինչպես ցնդել ե ըստ յերեսութին նրա վրա յերեկիցե գոյություն ունեցող ոդը:

— Ինչո՞ւ յերկրագնդի ոդը չի ցնդում, իսկ լուսնի ոդը ցնդել ե:

— Վորովհետեւ լուսնի վրա ծանրությունը նկատելի չափով պակաս ե, քան յերկրի վրա: Որինակ, յեթե լուսնի վրա մեկ կիլոգրամանոց կշռաքար տանեն և այնտեղ կախեն զսպանակավոր կշեռքի կեռից, այդ դեպքում նա այնտեղ վոչ թե հազար գրամ կքաշի, այլ միայն հարյուր յոթանասուն գրամ: Լուսնի վրա բոլոր մարմինները վեց անգամ ավելի թեթև են, քան յերկրի վրա: Լուսինն ավելի թույլ ձգողականություն ունի, այսինքն՝ նա մարմիններն ավելի թույլ ե ձգում դեպքի իրան, քան յերկրագունդը: Ահա հենց այդ պատճառով ել լուսինը չի կարողացել եր շրջապատում մթնոլորտ պահել:

— Ել ի՞նչ են իմացել լուսնի մասին, պատմի՞ր:

— Լուսինը ինքն իր շուրջն ավելի զանդաղ ե պտտվում, քան յերկրագունդը: Լուսնի մեկ որը հավասար ե յերկրագնդի քսանինն որվան. նրա վրա ցերեկը տեսում ե տասնչորս ու կես որ և նույնքան ել գիշերը:

— Այդքան ել յերկար գիշեր:

— Այս: Յեվ այդ յերկար գիշերվա ընթացքում լուսնի վրա հողն այնքան ե սառչում, վոր սարսափելի սառնամանիք ե լինում, իսկ այդպիսի սառնամանիք յերկրագնդի վրա յերբեք չի լինում: Իսկ յերկարատեւ ցերեկվա ընթացքում, ընդհակառակը, յուսնի վրա հողը յեռման ջրից ել ավելի յե տաքանում: Տասնչորս որ անընդհատ արևնայրում ե, իսկ լուսնի վրա չե վոր վոչ մի ամպ չկա, այս պատճառով ել արեկ տապը վոչնչով չի մեղմանում:

— Բացի լեռներից ու հարթավայրերից լուսնի վրա ել բնչ են նկատել:

— Նկատել են հողի մեջ խոր ճեղքվածքներ, վորոնք մոտ մեկ կիլոմետր բացվածք ունեն և յերբեմն հարյուրավոր կիլոմետր յերկարություն: Դրանց անվանել են «ակոսներ»: Իսկ մի քանի լեռներից դեպի ամեն կողմ ձգվում են ինչ-վոր շերտեր, վորոնք ստվեր չեն գցում և վառ կերպով տարբերվում են լուսնի հողի վրա: Դրանց անվանել են «ճառագայթներ»: Թե ինչ բան են դրանք՝ վոչ վոր ել չգիտե: Գուցե դրանք՝ լավայի սառած հոսանքներ են, կամ մի վորեւ ուրիշ բան:

Խոսակցելու ընթացքում մենք չնկատեցինք, թե ինչպես հասանք տուն: Այնտեղ յերպայրս մի գրքի մեջ ցույց տվեց ինձ ամբողջ լուսնի և նրա մասերի նկարները, ինչպես նրանք յերեսում են ուժեղ հեռադիտակով:

— Ինչքան կուզեյի ինքս անձամբ թափառել այդ լեռներով, — յերպում եյի յես՝ նայելով նկարներին: — Միթե անկարելի բան ե լուսնի վրա բարձրանալ:

— Առաջմ հնարավոր չե, — պատասխանեց յեղբայրս: Բայց այդպիսի ճանապարհորդություն կատարելու համար ապագայում հնար կզտնեն: Կար ժամանակ, յերբ մարդիկ Ամերիկա ել չեյին կարողանում հասնել և այդ առհասարակ անկարելի բան եյին համարում: Իսկ այժմ մեծ շոգենավը 4—5 օրվա ընթացքում հազարավոր մարդիկ ե այնտեղ հասցնում: Կզա ժամանակ, յերբ լուսնի վրա թռչելն ել հնարավոր կդառնա: Այս ժամանակ մարդիկ թռիչք կկատարեն լուսնի շուրջը և կկարողանան իմանալ, թե ի՞նչպես ե կառուցված նա և նրա մյուս կեսը, այն մասը, վոր յերբեք դեպի մեզ չի դառնում:

— Միթե մեզ լուսնի միայն կեսն ե յերեսում:

— Այս, միշտ միննույն կեսը: Լուսինը յերկրագնդի շուրջն այնպես ե պտտավում, վոր նա դեպի մեզ ե նայում միշտ իր միննույն կողմով: Մյուս կողմը մեզ համար յերբեք տեսանելի չի լինում: Վոչ վոր չգիտե, թե ի՞նչպես ե կառուցված այդ անտեսանելի կողմը: Յեվ միայն լուսնի շուրջը թռիչք կատարելու միջոցով կարելի յե այդ իմանալ: Դեռ շատ ուրիշ գաղտնիքներ ունի իր մեջ մեզ հարևան այդ աշխարհը, և այդ գաղտնիքները բաց կանեն ապագայում դեպի լուսինը կատարվելիք ճանապարհորդությունները:

Յեղբորս հետ այսպիսի խոսակցություններ շատ վաղուց ենք ունեցել սրանից քառասուն տարի առաջ, յերբ յետ դեռ շատ յերիտասարդ եյլ, Այն ժամանակ վոչվոք լուսնի վրա թոշելու մասին լուրջ չեր մտածում: Բայց մեր որերում արդեն ժամանակն ե այդ գործը նույնպես հերթի դնելու: Մարդիկ ուզում են աշխարհի բոլոր անկյունները հետազոտել, ձգտում են ամեն տեղ հասնել և ամեն ինչ մասին իմանալ: Նրանք յերկրագնդի համարյա բոլոր վայրերում յեղել են, նույնիսկ ամենադժվարամատչելի տեղերում: Կյանքի համար վտանգավոր պայմաններում մարդիկ բարձրացել են ամենաբարձր լեռները, իջել են ստորերկրյա մութ այրերը, Բազմաթիվ անգամներ լողալով կտրել անցել են ովկիանոսները, անցել են անանցանելի անտառներով ու անպտուղ չոր անապատներով: Մարդիկ այցելել են նաև կիզիչ հասարակածն ու սաոցապատ բնեռները: Ուրիշ խոսքով՝ յերկրագնդի մակերևույթը հետազոտված ե յերկարությամբ:

Բայց աշխարհը միայն յերկրագունդը չե: Աշխարհը—այն բոլորն ե, ինչ մեզ շրջապատում ե յերկրագնդի վրա և յերկնքում: Հեռու յերկնային տարածության մեջ կան նաև ուրիշ հսկայական գնդեր, ուրիշ յերկիրներ: Դրանցից ամենից մոտիկը մեզ համար լուսինն ե, իսկ ավելի հեռու—մոլորակները: Դրանց նույնպես պետք ե հետազոտել, Մինչև հիմա մարդիկ լուսինն ու մոլորակները հետազոտել են հեռադիտակների ոգնությամբ միայն: Այդ դեռ բավական չե: Լուսնի մասին շատ բան իմանալու համար—պետք ե հենց այնտեղ գնալ: Մարդը նվաճել ե յերկրագունդը, հիմա նա ուզում ե նվաճել նաև յերկինքը:

Բայց ի՞նչպես պետք ե անել այդ: Ի՞նչ ձեռվ պետք ե հասնել մինչև լուսինը:

Կարող ե թվալ՝ դրանից ել հասարակ բան: Գոյություն ունեն ողային նավեր (դիրիժաբլներ), ողապարիկներ, սավառնակներ. հարկավոր ե միայն նստել դրանց մեջ և ըսնել լուսնի ճանապարհը: Բայց այնուամենախնիվ, յեթե դուք գոքերում գտնեք այն հարցի պատասխանը, թե մինչև հիմա ի՞նչքան են կարողացել բարձրանալ դիրիժաբլները,

ողապարիկներն ու սավառնակները, այդ գեպքում կիմանաք, վոր մինչև հիմա գեանից վոչ մի մարդ 22 կիլոմետրից ավելի չի բարձրացել: Ճիշտ ե, վոր քսաներկու կիլոմետրը սոսկալի բարձրություն ե, ամենաբարձր սարից յերկու և կես անգամ բարձր ե, բայց նաև ամառ հսկայական թվացող այդ բարձրությունն ել մի քայլ անգամ մեզ չի մոտեցնում լուսնին:

Դուք հավանորեն հարց կտաք, թե ինչու մարդիկ 22 կիլոմետրից ավելի չեն բարձրանում: Ի՞նչն ե նրանց խանգարում այնտեղ բարձրանալու:

Խանգարում ե այն, վոր ի՞նչքան վեր են բարձրանում, այնքան ողի խտությունը պակասում ե: Յեկ դուք արդեն գիտեք, վոր սավառնակները, դիրիժաբլներն ու ողապարիկները հենվում են ողի վրա. յեթե ողը չափազանց նոսրացած ե լինում, ապա այդպիսի ողում նրանք մնալ չեն կարող: Այդպիսի բարձրության վրա մարդիկ չնչել չեն կարող, և դրա համար ել անհրաժեշտ ե լինում իրենց հետ ողի պաշար վերցնել:

Այդ բարձր թոփչները բոլորովին այն նպատակով չեն կատարվել, վոր լուսնին մոտենան, այլ միայն նրա համար, վոր հետազոտեն մեր յերկրագունդը շրջապատող ողի ովկիանոսը: Մենք բոլորս ապրում ենք այդ ովկիանոսի հատակին և հետևաբար պետք ե իմանանք նրա հատկությունները: Այդ ողային ովկիանոսը կարծեք յերկու հարկից կառուցված լինի—ներքին և վերին հարկերից: Յերկուոր միասին կազմում են մթնոլորտը («ատմոսֆերա»). Ներքենի հարկն ստացել ե «արոպասֆերա» անունը, իսկ վերևինը՝ «սարատոսֆերա»: Ոգտակար ե այս անունները հիշել, վորովհետև վերջերս դրանք վոչ միայն գրքերում են հանդիպում, այլև թերթերում:


Ներքին հարկը — տրոպոսֆերան — տվելի խիտ ե, քան ստրատոսֆերան, չնայած վոր մեկը մլուսից կտրուկ սահմանով առանձնացած չե և մեկից մյուսն սկսվում ե ատմիանաբար: Բայց այնուամենախնիվ կարելի յե սահմանագծել: Այդ սահմանը գտնվում ե մոտավորապես տառ կիլոմետր բարձրության վրա: Այդ տաս կիլոմետրի սահմանաբարում (գետնից հաշված) վերև բարձրանալիս քանի գնում՝ ողը ցրտում ե: Յուրաքանչյուր կիլոմետր բարձրանալիս

ողի մի այնպիսի շերտի յենք հանդիպում, վորը ներքին շերտի հետ համեմատած՝ նոգից — վեց աստիճանն ցուլու և Սարատոսֆերայի սահմանում ամբողջ տարին, թե՛ ամառ, թե՛ ձմեռը 50 աստիճանի սառնամանիք ե (ըստ հարյուրաստիճանի շերտաչափի), Բայց ավելի բարձր սարատոսֆերում, ինչքան ել վոր հետազոտել են, գետնից բարձրանալիս սառնամանիքի նկատելի ուժեղացում չի նկատվել:

Տրոպոսֆերի և սարատոսֆերի միջև յեղած վողջ տարբերությունը դեռ այս չեւ Մյուս տարբերություններն այն են, վոր մշուշները, ամպերը, ձյունը, անձրեր, մրրիկը և այլն լինում են միայն ոդային ովկիանոսի ներքին հարկում, իսկ սարատոսֆերում միշտ յերկինքը պարզ ե, միշտ անամպ. այնտեղ բոլոր ովին ձյուն, անձրե, մրրիկ չի լինում:

Յերկար ժամանակ մարդիկ չկարողանալով մտնել սարատոսֆերի նոսր ողը՝ թոշում եյին միայն տրոպոսֆերում և միայն վերջերս հանդգնեցին տրոպոսֆերը սարատոսֆերից բաժանող սահմանից ավելի բարձր թոշեր. Դրանք շատ վտանգավոր թոփշքներ եյին: Ամերիկացի ուղղմական ուղագնաց Գրեյը 1927 թվին ողապարիկով հասավ մինչև 13 կիլոմետր բարձրության, բայց նա կենդանի չվերադարձավ. յելք գունդը իջավ ցած, Գրեյին իր կողովում մեռած գտան:

Սարատոսֆեր բարձրանալու համար այժմ ոգտագործում են հատուկ կառուցվածք ունեցող մեծ գնդեր, վորոնք կոչվում են սարատոստատներ: Յեթե դուք թոշելու պատրաստ սարատոստատը տեսնեք, նա ձեզ կզարմացնի այն բանով, վոր բոլորովին գնդի նման չե, նա իր արտաքին տեսքով ավելի շուտ նման ե մի հսկայական գազարի: Այդ նրանից ե, վոր նրա մեջ ավելի քիչ գազ են լցնում, քան նա կարող ե տանել: Յերբ սարատոստատն ավելի ու ավելի լե բարձրանում և ընկնում ե ողի նոսր շերտերի մեջ, այդ դեպքում արտաքին ձնշումը թուլանում ե (այդ նրանից ե, վոր ողն ինչքան նոսր ե, նույնքան քիչ և ձնշում), և գազն սկսում ե գնդի թաղանթի վրա ներսից ձնշում գործելով նկատելի կերպով ընդարձակել այդ թաղանթը. նա հետզհետե փքում ե և արգեն բավականին մեծ բարձրության վրա իսկական գունդ ե դառնում: Հիմա




Նկ. 10. Ամենաբարձր լեռնային բարձրունքների համեմատությամբ ողագործիկներով (սարատոստատներով) կատարված թոփշքների բարձրությունները: Մինչեւ հիմա յեղած թոփշքների մեջ ամենաբարձրը կատարել են խորհրդային սպազմաները:

կարծեմ արդեն ձեզ համար հասկանալի յե, թե ինչու թոփշքի հենց սկզբից գնդի մեջ լրիվ շափով դադ չեն լցնում. հակառակ դեպքում նա այդքան մեծ բարձրությունների հասնել չեր կարող, վորովհետև այդ բարձրության հասնելուց առաջ նա կպայթեր ներքին ճնշումից:

Ստրատոստատները բաց կողովներ չեն ունենում. դրա փոխարեն նրանք ունենում են պինդ փակված գնդաձեխուցեր, վորոնք ունենում են նուրբ, բայց չափազանց ամուր մետաղյա պատեր: Այդպիսի խցի (կամ ինչպես ողագնացներն են ասում՝ գոնդոլի) ներսում գտնվող մարդիկ վոչ թե շրջապատող բարձրության նոսր ու ցուրտ ողն են չնշում, այլ գետնից իրենց հետ վերցրած ողի պաշարով են չնշում: Դրսի սոսկալի սառնամանիքը նույնպես գոնդոլից ներս չի մտնում. արեկի ճառագայթները, վորոնց յերբեք ամպերը չեն խանգարում, գոնդոլի մետաղյա պատերն այնպես են տաքացնում, վոր նրա ներսում նույնիսկ սաստիկ շոդ ե լինում:

Առաջինն ստրատոստատով բարձրացել ե բելգիացի գիտնական պրոֆեսոր Պիկարը: Նա 1931 և 1932 տարիներին յերկու թոփշք կատարեց և հասավ մինչ այդ չտեսնված բարձրության՝ մոտ 16 կիլոմետրի: Բայց նա միայն կարճ ժամանակով համարվեց միակ մարդը, վոր ամենաբարձր թոփշքն ե կատարել դեպի ստրատոսֆերը Խորհրդային ողագնացները մեր յերկրի գրոշակն ավելի մեծ բարձրության հասցրին. սկզբում 19 կիլոմետր, իսկ այնուհետև 22 կիլոմետր բարձրության: 19 կիլոմետր վերելքը „СССР“ ստրատոստատով կատարեցին յերեք ռազմական ողագնացներ — Պրոկոֆյեվը, Բիլնբաումը և Գոգունովը: Տասնիննը կիլոմետր բարձրության վրա ողը 15 անգամ ավելի նոսր ե, քան ներքնում գետնի մոտ: Նոսրացած ողը յերբեք չի անդրադարձնում արեկի այն ճառագայթները, վորոնցով պայմանավորված ե յերկնակամարի կապտավուն գույնը. այդ պատճառով ել այնտեղ պարզ յերկնքը նույնիսկ արեկի լուսավորման դեպքում համարյա ու ե յերկում և միայն թույլ կապտավուն յերանգավորում ե ունենում:

Յերկորդ ստրատոստատը կառուցվել ե Հենինգրադի Պաշ-Ավիաքիմի աշխատակիցների կողմից և կոչվել ե „С-ОАХ-1“, այսինքն «Պաշ-Ավիաքիմի ստրատոստատ



Նկ. 11. Խորհրդային „СССР“ ստրատոստատի թոփշքի սկիզբը: Նա հասավ մինչև 19 կիլոմետր բարձրության:

առաջին»։ Նրանով բարձրացան ողաչու ֆեդոսեյենկոն, ինժեներ Վասենկոն և յերիտասարդ գիտնական Ուսիսկինը։ Նրանք հասան 22 կիլոմետր բարձրության և այդ փայլուն հաջողությունը ձեռք բերվեց յերկինքը նվաճող այդ յերեք անձնազոհ հերոսների թանկագին կյանքի դնով։ Ստրատոստատը վայրեցքի ժամանակ խորտակվեց, և յերեք հոգին ել գոնզողում գտնվեցին մեռած վիճակում։ Բայց այնուամենայիվ նրանց կործանումը չվատեցրեց մյուս հետազոտողներին, և այժմ արդեն Պաշը Ավիաքիմի աշխատակիցները ձեռնարկել են նոր ստրատոստատի՝ «Օ—ՕԱՀ—Ա.ի կառուցմանը։

Ստրատոստատի վերելքի համար վորոշ սահման գոյություն ունի, վորից ավելի նրանք այլևս բարձրանալ չեն կարող։ Ստրատոստատներ կառուցողները (որինակ՝ Գոդունովը) կարծում են, վոր այդ սահմանը քառասուն կիլոմետր բարձրություն ե, վորտեղ ողը 250 անգամ ավելի նոսր է, քան այն ողը, վոր մենք մնշում ենք ներքենում։ Յեվ վոչ մի ստրատոստատ, ինչքան ել վոր նա մեծ լինի, չի կարող մարդկանց 40 կիլոմետրից ավելի բարձրացնել։

Չնայած մարդիկ դեռևս 22 կիլոմետրից ավելի չեն բարձրացել, բայց այնուամենայինիվ նրանք կարողացել են վորոշ բաներ գիտենալ ավելի մեծ բարձրությունների ողի հատկությունների մասին։ Շատ անգամ դեպի ստրատոսֆերը բաց են թողել փոքրիկ ոդային գնդեր (որինակ՝ — 2 մետր տրամագծով), վորոնց վրա կապել են թեթև գործիքներ։ Այդ գործիքներն այնպես են հարմարեցրած, վոր նրանք փաթաթվող ժապավենի վրա նշում են ողի բարեխառնությունը և ուրիշ չափումներ կատարում։ Այդ գնդերը, վորոնք կոչվում են գունդ — մխան¹, հաջողվել ե բաց թողնել մինչև 36 կիլոմետր բարձրության հասնելլ։ Դրանից ավելի բարձր արդեն նոսրացած ողը նրանց պահել չի կարող։ Հիսուն կիլոմետր բարձրության վրա ողը հազար անգամ ավելի պակաս խտություն ունի, քան ներքենի ողը, իսկ 100 կիլոմետր բարձրության վրա ողը 120 հա-

¹ Բացի այսպիսի ինքնագիր զուրծիքներ ունեցող գնդերից ոգտագործում են նաև այնպիսի գնդեր, վորոնց գործիքներն իրենց ցուցությունները հաղորդում են ռադիոազդանշաններով։ Այս վերջինը խորհրդացային զիտնական Պ. Մալտանովի գյուտոն ե.



Նկ. 12. Լուսամուտից յերկում և «СССР» ստրատոստատի գոնդոլի ներքը։

զար անգամ ավելի պակաս խտություն ունի, կարելի յետ ասել, վոր այդպիսի բարձրության վրա ող համարյա գոյություն չունի: Դրանից ավելի բարձր ողի հետքերն ել են ջրանում, և սկսվում է յերկնային անող տարածությունը: Ի՞նչ բան ե մթնոլորտի հարյուր կիլոմետրն այն չորս հարյուր հազար կիլոմետր տարածության հետ համեմատած, վորով մեր յերկրագունդը բաժանված է լուսնից:

Ուրեմն այսպես, գեպի լուսինը տանող ճանապարհն անցնում ե մոտ 400 հազար կիլոմետր դատարկ տարածությունով, վորի միջով վոչ գունդը կարող ե անցնել, վոչ գերիժարլը և վոչ ել սալառնակը:

Յեթե նույնիսկ յերկրագնդի ու լուսնի միջև ընկած արածությունը լցված լիներ ողով, այդ գեպքում նույնպես սավառնակով կամ դիրիժաբլով հնարավոր չեր լինի թռչել մինչև լուսինը: Մինչև լուսինը յեղած հեռավորությունը տասն անգամ մեծ ե յերկրագնդի շրջագիծը: Իսկ արդյոք սավառնակը կարող ե առանց վայրեճքի տասն անգամ պառոյտ գործել յերկրագնդի շուրջը: Վոչ, չի կարող բենդինը չի բավականացնի, նա չի բավականացնի նույնիսկ յերկրագնդի շուրջը մի անգամ միայն պտտվելու համար: Վոչ մի սավառնակ կամ դիրիժաբլ չի կարող չորս հարյուր հազար կիլոմետր ճանապարհի համար վառելանյութի պաշար վերցնել: Ուրեմն, յեթե նույնիսկ յերկրագնդի ու լուսնի միջև ընկած տարածությունը ողով լցված ել լիներ, մինսւյն ե, սավառնակով կամ դիրիժաբլով մինչև այնտեղ համելը հնարավոր չեր լինի: Այդպիսի ճանապարհորդության համար փոխադրության ուրիշ միջոցներ պետք ե մասնել:

Հապա լսեցեք, թե ի՞նչ ե մտածել այդ մասին սրանից հիսուն տարի առաջ քրանսացի գրող Ժյուլ Վեռնը:

ԹՆԴԱՆՈԹԻՑ ԴԵՊԻ ԼՈՒՍԻՆԸ


Այն, ի՞նչ վոր մտածել ե Ժյուլ Վեռնը, կարող ե պատճել, վոր մեզանից ամեն մեկի մտքով ել անցած լինի: Նա սսում եր՝ պետք ե կառուցել մի հսկայական թնդանոթ և այդ թնդանոթն անպիսի մի մեծ արկով լցնել, վորի մեջ կարողանան մարդիկ տեղափորվել: Յեթե նշանը

լավ ե ուղղված, ապա թնդանոթը կրակելուց հետո արկը ճանապարհորդների հետ միասին կթուչի մինչև լուսինը:

Վորպեսզի իր միտքն ավելի պարզ հասկացնի, Ժյուլ Վեռնը հնարել ե այսպիսի մի պատմվածք: Յերեք համարձակ և գյուտարար մարդիկ մտածել են զնալ լուսնի վրա: Դրա համար նրանք գետնի մեջ ուղղահայաց դրությամբ, չտեսնված մեծությամբ մի հսկայական չուգունե թնդանոթ են ձուլում: Այդ թնդանոթը յերեսուն մետր խորությամբ մտած եր գետնի մեջ: Նրա

մեջ հարյուրավոր տոնն ուժեղ վառողի լիցք եյին լցրել: Թնդանոթի համեմատ ել պատրաստել եյին նաև արկը, վոր յերեք մետր հաստություն ուներ: Նրա մեջ յերեք ճանապարհորդների համար կառուցել և կահավորել եյին սենյակիցիկ (կայուտ): Խուցի պատերն ունեյին յերեսուն սանտիմետր հաստություն և նրանց մեջ հաստ ապակուց լուսամուտներ եյին շինված, վորպեսզի յերկնային թոփչչի ժամանակ կարողանային դիտել իրենց շրջապատը: Ճանապարհորդներն իրենց հետ վերցրել եյին այնպիսի գործիքներ, վորոնց միջոցով նրանք մաքրում եյին շնչառությունից փշացած ողը և մի կողմից լրացնում նրա պակասը: Նրանք իրենց հետ վերցրել եյին ուտելիքի և խմելիքի բավարար պաշար, առհասարակ այն տմբնը, ինչկարող եր պետք գալ յերկնային ճանապարհության ժամանակ:

Հատուկ մեքենաների միջոցով արկն զդուշությամբ իջեցրին թնդանոթի հատակը, վորտեղ արդեն նախորոք պատրաստված եր վառողի հսկայական լիցքը: Սեղմեցին կոճակը, և ելեկտրական կայծը բոցավառեց վառողը:




Նկ. 13. Յրանսացի դրու Ժյուլ Վեռնը
«Քննասթից գեպի լուսինը» վեպի
հեղինակը:

Բարձրացավ մի զարհուրելի դղրդյուն, և արկը ճանապարհորդների հետ միասին սթնոլորտի միջով սլացավ դեպի յերկնային տարածության դատարկությունը՝ նա սլանում եր սոսկալի մեծ արագությամբ — մեկ վայրկյանում տառներկու կիլոմետր։ Կրակելու ժամանակ առաջացած սոսկալի ցնցման շնորհիվ յերեք ճանապարհորդներն ել կորցրեն իրենց գիտակցությունը։ Բայց շուտով նրանք զգաստացան և հանգիստ տեղափորկեցին խցիկում։ Նրանք յերկնային տարածության մեջ չեյին զգում արկի թոփչքը, վորովինետև թնդանոթից գուրս գալուց հետո յերկնային դատարկության մեջ նա այնքան սահուն եր թոչում, վոր վոչ մի ցնցում չեր զգացվում։ Նրանք համարյա չորս որ թռան յերկնային աարածության մեջ, բայց լուսնին դեռ չմոտեցան։

Այնուամենայնեվ նրանք չկարողացան լուսնի վրա ընկնել։ Պատահաբար, դեռևս թոփչքի սկզբին, արկը մի քիչ շեղվեց նշված ուղուց և այդ պատճառով ել ճանապարհի վերջում նա սահեց լուսնի կողքից և մի անգամ նրա շուրջը պտույտ գործելով նորից ուղղվեց դեպի յերկրագունդը։ Մեր ճանապարհորդները նորից չորս որ շարունակ յերկնային դատարկ տարածության մեջ թռան, և վերջապես արկը հասավ յերկրագնդին։ Այստեղ ճանապարհորդներին սպասում եր մի նոր պատահար. արկն ընկավ ովկիանոսի մեջ... Բայց վորովինետև նա ներքին խոռոչ ուներ, այդ պատճառով ել հատակը չիջավ, այլ սկսեց լոդ տալ ջրի յերեսին։ Բավականին մեծ հաջողություն եր այդ, վորովինետև յեթե արկը ցամաքի վրա ընկներ, այդ դեպքում նրա մեջ յեղող ճանապարհորդները կջախիջախվեյին։

Այսպես հաջողությամբ վերջացավ թնդանոթից դեպի լուսինը կատարված յերևակայական ճանապարհորդությունը, չնայած վոր ճանապարհ ընկնող համարձակները յերբեք ել չեյին մտածում այն մասին, թե պիտի կարողանան արդյոք վերադառնալ։

Այս թոփչքի նկարագրությունը լի յե չափազանց հետաքրքիր արկածներով, վորոնց մասին մենք այստեղ չենք պատմի։ Ով ցանկանում ե, կարողե ե կարդալ Ժյուլ Վեռոնի «Թնդանոթից դեպի լուսինը» գրվածքը։ Մեղ համար հիմա կարևորն այլ բան ե. անհրաժեշտ ե իմանալ, թե այս հետաքրքրաշարժ յերևակայական պատմավածքի մեջ ինչն




Նկ. 14. Պատրաստություն — հսկայական թնդանոթային արկի մեջ նստած դեպի լուսին ճանապարհորդելու համար (ըստ Ժյուլ Վեռոնի «Թնդանոթից դեպի լուսինը» գեղի)։ Թնդանոթը յերեսուն մետր խրված ե գետնի մեջ։

և իսկապես հնարավոր և ինչը՝ բոլորովին անիրազործելի:

Հագանարեն դուք մտածում եք, վոր յերբեք հնարավոր չե յերկրագնդից վորևե իր նետելով ընդ միշտ հեռացնել: Ուրեմն հնարավոր չե նաև արկ նետել մինչև լուսնի հեռավորությունը: Արդոք վորևե մեկը տեսել ե, վոր նետված իրն անմիջապես յետ չընկնի: Վհչ, այդպիսի բան դեռ վոչ վոր չի տեսել: Իսկ ինչու դրա պատճառը միայն այն ե, վոր բավականին ուժեղ չեն նետում: Յեթե իրը չափազանց մեծ արագությամբ նետվեր, այդ դեպքում բոլորովին այլ բան կստացվեր: Հիմա ձեզ համար պարզ կլինի, թե այդ գեպքում հատկապես ինչ ե կատարվելու:

Պատկերացրու քեզ, վոր բարձր սարի գագաթին մի թնդանոթ ե դրված, վորն ուղղված ե յերկրագնդի մակերեսութիւն յերկայնությամբ: Դուք 39-ըդ եջի նկարի վրա տեսնում եք այդպիսի մի թնդանոթ: յերկրագնդի մակերեսույթը կոր են հարգած (նկարի վերին մասում), այդ ձեզ հասկանալի յե, թե ինչո՞ւ չե՞ վոր յերկիրը գունդ ե, ուրեմն նրա մակերեսույթը կոր ե: Թնդանոթից կրակված արկերը նույնպես ուղիղ չեն գնում. նրանց ճանապարհը կորանում ե գեպի յերկրագնդը, վորովնետե արկերը ծանրություն ունեն: Յեթե արկերի թուշքի արագությունն այնքան ել մեծ չե, այդ գեպքում նրանց ճանապարհն ավելի շատ ե ծովում, քան յերկրագնդի կորությունն ե, այս պատճառով ել ճանապարհի վերջում հանդիպում ե յերկրագնդին և ընկնում նրա վրա: Ինչքան մեծ լինի արկի արագությունը, նա այնքան հեռու կընկնի թնդանոթից: Կարող ե այնպիսի մեծ արագություն լինել, վորի ժամանակ արկի ճանապարհն այնքան կորանա, վորքան յերկրագնդի կորությունն ե: Ի՞նչ կպատճի այդ արկին: Ո՞ւր կընկնի նա: Վոչ մի տեղ ել չի ընկնի — չե վոր նա նույնիսկ չի մոտենում գետնին: Նա յերկրագնդի շուրջը մի լրիվ պտույտ կգործի և կվերադառնա այստեղ, վորտեղից թոել եր: Յեթե այդ ժամանակ արկի թուշքը չխանգարելու համար թնդանոթը տեղից հեռացնեն, այդ գեպքում արկը յերկրորդ պտույտը կկատարի, այնուհետև յերրորդ պտույտը, չորրորդը և այլն: Մի խոսքով՝ այդպիսի արագությամբ նետված արկն անընդհատ կպատճի յերկրագնդի շուրջը՝ առանց նրա վրա ընկնելու:




Նկ. 15. Թե ինչպես սկսվեց Ժյուլ Վեռնի հերոսների ճանապարհորդությունը գեպի լուսինը:

Հաշվումները ցուց են տալիս, վոր այդ պետք եւ պատահի այն արկի հետ, վորը թնդանոթից կրակված եւ վայրկանում ուժ կիլոմետր արագությամբ։ Այդպիսի ուժեր թնդանոթներ դեռևս գոյություն չունեն։ Ծրդի թնդանոթներն այդպիսի արագությամբ արկ չեն կարող գցել ամենահզոր թնդանոթներն իրենց արկին կարող են միայն վարկյանում մեկու կես կիլոմետր արագություն տալ։ Այդպիսի արկն ի հարկե կը նկնի գետնին։ Յեթե հաջողվեր այնպիսի մի թնդանոթ կառուցել, վորը կարողանար իր արկերը մեկ վայրկյանում ուժ կիլոմետր արագությամբ գցել, այդ դեպքում նրանք հավիտենապես կպտտվելին յերկրագնդի շուրջը, առանց նրա վրա ընկնելու։

Ավելի հեռուն գնանք։ Յենթադրենք, վոր լեռան գագաթին դրված թնդանոթը մի վայրկյանում ուժ կիլոմետրից ավելի արագություն ունեցող արկեր եւ կրակում։ Ի՞նչպես կթոշի նման արկը։ Նա նույնպես գետնին չի ընկնի, այլ կպտտվի յերկրագնդի շուրջը, բայց այս անգամ արդեն ավելի ձգված շրջագծով։ Իսկ մեկ վայրկյանում տասնմեկ կիլոմետր արագության դեպքում արկը յերկրագնդից ամբողջովին կհեռանա։ Նա կարող եւ հասնել մինչև լուսինը և նույնիսկ նրանից ավելի հեռու գնալ։

Ուրեմն թնդանոթային արկը մինչև լուսինը նետելու խնդրում անհնարին վորեե բան չկա։ Ի՞արկե, այժմ դեռևս չկան այնպիսի թնդանոթներ, վորոնք կարողանային մեկ վայրկյանում տասնմեկ կիլոմետր արագությամբ թռչող արկեր կրակել։ Այնուամենայնիվ, յեթե հաջողվի այդպիսի թնդանոթ պատրաստել, նրա արկերը դիպուկ կրակելու դեպքում կկարողանան ընկնել լուսնի վրա։

Բայց լուսնի վրա արկ ուղարկելը դեռևս գործի կեսն եւ կուսնի ոմբակոծություն կինի այդ, և վոչ թե նանապարհորդություն նրա վրա։ Վորապեսզի ոմբակոծությունը ճանապարհորդության վորիվի, պետք եւ արկերի մեջ մարդկիկ նստացնեն։ Յեւ բացի այդ, անհրաժեշտ եւ, վոր կրակելու ժամանակ մարդիկ անվսաս մնան։ Գործի այս յերկը կեսը պակաս կարևոր չե, բան առաջին կեսը։ Յեթե ճանապարհորդները վասպեն, այդ դեպքում վոչ միայն անվեհեր մարդիկ կկործանվեն, այլև ձեռնարկությունը կկորցնի իր նշանակությունը, և վոչ վոք լուսինը չի տեսնի։



Նկ. 16. Թե ինչպես վերջացավ նրանց ճանապարհորդությունը։ Արկը գեղի յերկրապունդ վերադառնալիս ընկալ ովկիանոսի մեջ։

Անհրաժեշտ է, վոր ճանապարհորդները բարեհաջող կերպով թնդանոթի փողարերանից դուրս գան, հասնեն մինչև լուսիր և այնտեղից ել անվաս հետ գան:


Յեթե ճանապարհորդները նախորոք վերցրել են այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ է, այդ դեպքում թռիչքի ընթացքում նրանց վոչ մի վտանգ չի սպառնում: Գլխավոր վտանգը կրակելու ժամանակ ե սպառնում նրանց, և այդ այնպիսի մի վտանգ է, վորից խուսափել հնարավոր չեւ կրակելու ժամանակ առաջացած ցնցումը, խոսք չկա, վոր կործանիչ ե արկի մեջ նստած ճանապարհորդների համար: Մարդու համար այնքան վտանգավոր ե կրակելու ժամանակ արկի մեջ նստելը, վորքան վտանգավոր կլիներ նրա համար, յեթե նա կրակելու ժամանակ թնդանոթի փողարերանի դիմացը կանգնած լիներ, ի՞նչը կարող ե մարդուն ազատել, յերբ նրա գեմ հանդիման թնդանոթ կրակեն, այն ել այնպիսի հսկայական թնդանոթ: Կործանումը միանգամայն անխուսափելի յեւ:

Ուրեմն, արդեն պարզ է, վոր մարդիկ չեն կարող հույս դնել, թե կկարողանան թնդանոթի փողից անվտանգ դուրս թռչել: Թեկուզ և արկը նրանց թնդանոթի փողից վողջ և առողջ դուրս բերի, հապա ի՞նչպես նրանք պետք ե վերադառնան լուսնից: Վերտեղից նրանք լուսնի վրա թնդանոթ պետք ե գտնելին, վոր նրանց յետ նետեր դեպի յերկիրը: Հույս գնել ինչ-վոր յերջանիկ դեպքի վրա: Այդ արդեն վերին աստիճանի թեթևամտություն կլիներ:

Մի խոսքով՝ դեպի լուսինը ճանապարհորդելու համար սափառնակներն ու դիրիժարեներն ավելի յեն պետքական, քան թնդանոթը: Դեռ սափառնակը կարող ե մարդուն տասնչորս կիլոմետր բարձրացնել, իսկ թնդանոթը կենդանի վիճակում նրան մի սանտիմետր ել չի կարող բարձրացնել:

Իսկ ի՞նչն ե ավելի պետքականը լուսինի վրա թռչելու համար: Վեր թռչող մեքենան կկարողանա մարդկանց անվաս կերպով դուրս բերել մթնոլորտից դեպի յերկնային դատարկ տարածությունը, հասցնել մինչև լուսինը և այնուհետեւ այնտեղից նորից վերադարձնել իր հարազատ յերկրագունդը:

Այնպիսի մի մեքենա պետք ե լինի այդ, վորը վոչ թե կառուցված լինի սափառնակի կամ թնդանոթի ձեռփ, այլ ուկետի ձեռփ:




Նկ. 17. Բարձր լեռան վրայից կատարվող յերեակայական թնդանոթուին հրաձգություն, գորի ժամանակ արկերը թռչում են հսկայական արագությումք

ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉՈՒ ՅԵ ԹՌՉՈՒՄ ՌԱԿԵՏԸ

Հասարկական տոների և զբուանքների ժամանակ պուրակներում յերեխ պատահել եք, թե ինչպես յերեկոյան մուլթ յերկնքում հսկայական ռակետներ (հրթիռ) են թռչում և բարձրում գույնզգույն լուսավոր աստղեր ցրում։ Կարող ե պատահել, վոր դուք յերբեկցե գետնին տեսած լինեք պայթելուց հետո ընկած ռակետի դատարկ խողովակը։ Բայց թե ինչպես ե կառուցված ռակետը և ինչու համար նա թռչում ե, յես հավատացած եմ, վոր այդ մասին դուք չգիտեք։ Այն ինչ՝ այդ պետք ե գիտենալ։ Այլ կերպ դուք չեք կարող իմանալ, թե ինչ միջոցներով ե, վոր մարդիկ հույս ունեն, թե «կնվաճեն յերկինքը» — կթռչեն յերկնային տարածությունը և կայցելեն լուսնին։

«Ռակետ» բառն իտալերեն ե և նշանակում ե «խողովակ»։ Այդ մի խողովակ ե, վորը լցված ե վառողով։ Սրբեն 43-րդ եջում ցույց ե տրված մի փոքրիկ ռակետի կառուցվածքը. այն ռակետներից ե այդ, վոր տոների ժամանակ գործածում են հրավառություն սարքելու համար։ Ստվարաթղթե խողովակի մեջ ամուր կերպով այնպիսի բաղադրությամբ վառող են լցնում, վորը վոչ թե միանգամբց ե բռնկվում, այլ աստիճանաբար այրվում ե։ Խողովակի մի ծայրը փակ ե, իսկ մյուսը — բաց, այդ բաց ծայրի դիմաց վառողի մեջ մի խոր խորշ ե արված։ Բաց ծայրի նեղացրած մասով անցնող յերկղի ոգնությամբ վառողը ներսից բոցավառում են, և անմիջապես ռակետը սլանում ե գեղի վեր։ Վորպեսզի ռակետն ուղղահայաց կերպով ողի միջով դեպի վեր թռչի և վոչ թե զլուխսկոնձի տալով գետին ընկնի, զրա համար նրա յետելից մի յերկար փայտ են ամրացնում — ռակետի «պոչը»։ Յեթե ուզում են, վոր ռակետը գույնզգույն աստղեր ցրի, այդ գեղքում պետք ե նրա զլսի մասում բենզավան կրակի գնդիկներ տեղափորել յերբ վառողն այրվելով հասնում ե մինչև այդտեղը, գնդիկները բռնկվում են և ցրիվ գալով թափվում են ցած։

Ռակետները վառողով լցնելը չափազանց վտանգավոր գործ ե. վառողը ճնշելու ժամանակ հեշտությամբ կարող ե պայթել։ Ռակետները պետք ե պատրաստեն միայն այնպիսի մարդիկ, վորոնք շատ լավ գիտեն այդ գործը։




Նկ. 18. Գլշերային յերկնքում թռչում են ռակետները և ցրում լուսավոր աստղեր։

Յերբեք մտքներիցդ չանցկացնեք ռակետ լցնել, վորովհետեւ զրանից, բացի դժբախտ պատահարից, ուրիշ բան դուրս չէ դա: Նույնիսկ փորձված մարդկանց ձեռքով ռակետներ պատրաստելու ժամանակ բազմաթիվ դժբախտություններ են տեղի ունեցել — հրդեհներ, հաշմություն, մարդկանց կործանում և այլն:

Փոքրիկ զվարճալի ռակետները բարձրանում են մինչև վախճան — ուժանասուն մետր: Իսկ խոշոր լիցք ունեցող մեծ ռակետները գրանից ավելի բարձր են թուչում: Վերջին տարիներս սովորել են այնպիսի ռակետներ պատրաստել՝ վորոնք տաքը կիլոմետրից ավելի յեն բարձրանում: Դրանց պատրաստելը կապված է կյանքին սպառնացող մեծ վտանգությամբ հետ. ավելի վտանգավոր է նրանց վառելը և բաց թողնելը: Մեծ ռակետների հետ փորձ կատարող մարդիկ ուղղակի կերպով չեն հետևում ռակետին, այլ դիտում են հաստ պատի միջ բացված փոքրիկ անցքով: այդ պատը մարդուն չեզոքացնում է ռակետից: Շատ գեղքերում մարդիկ իրենք բոլորովին չեն դիտում թուչելու պատրաստված ռակետը, այլ դնում են լուսանկարչական ապարատ, վորը լուսանկարում է ռակետը, այնուհետև քննում են լուսանկարը և ուսամնասիրում են: Յեթե վառելու ժամանակ ռակետը պայթի, այդ գեղքում միայն ապարատն է խորտակվում և վոչ թե մարդիկ:

Մենք գեռ վոչինչ չենք ասել այն մասին, թե ինչու վառած ռակետը թուչում է գեղի վեր: Վառողը վառելու ժամանակ ռակետի մեջ մեծ քանակությամբ տաք դազ է առաջնում, վորի համար նեղվածք է լինում ռակետի ներսը, և նա ուժգին թափով դուրս է գալիս խողովակի անցքով: Բաց թողնելու ժամանակ ռակետի բաց կողմը դարձնում են գեղի գետինը, այնպես վոր տաք դազը հասում է գեղի գետինը: Առաջ կարծում եյին, թե ռակետից դուրս յեկող այս գաղի հոսանքը նրան շրջապատող ողից հրում է և այդ պատճառով ել իրը թե նա թուչում է գեղի վեր: Շատերը գեռ հիմա յել այդպես են մտածում: Բայց նրանք սխալվում են. ռակետի թուչելու պատճառը բոլորովին այլ բան է: Ահա թե վորն է այդ պատճառը:

Ռակետը վառելու ժամանակ նրա նեղ խորշում հավաքված գաղերն ուժեղ կերպով բոլոր ուղղությամբ սեղմում



Նկ. 19. Ինչպես ե կառուցված ռակետը և ինչպես ե նա թռչում: Տաք գաղությած առաջի պատը բաց են անում, շպրտիւմ է գեղի յետ ինչնու թերը յերկու հոգով ձգում են պարանը, մեկը պարանի ծայրը բաց թողնելու գեղքում մյուսն ընկնում ե ինչնու:

և ճնշում են աջ և ձախ, յետե ու առաջ, վերև և ներքեւ:
Աջ կողմի վրա յեղած ճնշումը հավասարակշռվում է ձախ
կողմի վրա յեղած ճնշումով դեպի առաջ յեղած ճնշումը
հավասարակշռվում է դեպի յետ յեղած ճնշումով: Իսկ
դեպի վեր յեղած ճնշումն արդյոք հավասարակշռվում է
դեպի ներքեւ յեղած ճնշումով: Արդյոք ուսկետի մեջ զագերը
դեպի վեր և դեպի ներքեւ միենույն չափով են ճնշում: Այդ
յերկու կողմի վրա յել ճնշումը հավասար կլիներ, յեթե
ուսկետի ներքեւում անցը չլիներ. բայց մենք գիտենք,
վոր ներքեսի պատը մի փոքրիկ անցը ունի, ուրեմն այդ
մասում պատի մի մասը պակասում է, գորի վրա զազը¹
կարողանար ճնշում գործել: Այս պատճառով ել ներքեւում
ճնշումն ավելի փոքր է, քան վերեւում, և շատ պարզ է,
վոր յեթե վերեւում ճնշումը մեծ է, ապա ուրեմն ուսկետը
պետք ե սլանա դեպի վեր:

Դուք տեսնում եք, վոր ուսկետը դեպի վեր ե թուչում
նրանից դուրս յեկող զազի ճնշման շնորհիվ, և վոչ թե
նրա տակ գտնվող զազի շնորհիվ: Ուրեմն ուսկետը թուչում
ե ինց իր ներսում գտնվող զազի ճնշման շնորհիվ: Այս
պատճառով ել ուսկետի համար միենույն է, թե նա արդյոք
ողով շրջապատված է, թե բոլորովին անող տարածու-
թյունով ե թուչում: Այստեղից ել հետեւում ե այն, վորի
մասին շատերը չեն զարմանում, վոր ուսկետը մեծ արա-
գությամբ կարող ե թուչել դատարկ տարծության միջով,
Դեռ ավելին, նա դատարկ տարածության մեջով ավելի
լավ պետք երարձրանա, քան ողի միջով այդպիսով նրա
համար այլևս կարիք չի լինի իրենից վեր ոդ ճեղքելու, վորը
բավականին մեծ արգելը ե արագ շարժման համար:

Ռակետի թուչելու ճիշտ պատճառն ավելի լավ կհաս-
կանաք, յեթե ուսկետը համեմատեք հրազենի հետ ի՞նչ
ե տեղի ունենում հրացանից կրակելու ժամանակ: Զգանը
քաշում են, և հարվածից վառողը բռնկվում է: Հրացա-
նափողի նեղ տարածության մեջ, գնդակի յետեւում, վառողի
այրվելուց առաջացել ե մեծ քանակությամբ տաք գագ,
վորը ճնշում ե բոլոր կողմերի վրա: Փողը հաստ պատեր
ունի, վորը ճաքելու յենթակա չե, իսկ դեպի առաջ պատ
չկա: այստեղ փողը փակված է գնդակով, վորն ուժեղ
թափով գուրս ե մղվում գազի կողմից: Բայց նույն այդ

գազը ճնշում է նաև դեպի յետ, կոթի կողմի վրա: Քանի
դեռ փողաբերանից գնդակը դուրս չի յեկել, գազի ճնշումը
ըուր կողմերի վրա միննույն է: Բայց հենց վոր գնդակը
դուրս ե գալիս, ճնշումը դեպի առաջ՝ անմիջապես դադա-
րում է և մնում է միայն ճնշումը դեպի յետ: Հիմա ի՞նչ
պետք ե տեղի ունենա հրացանի հետ: Նա ցնցվում է դեպի
յետ, ինչպես ասում են հրացանը «յետահարում ե»:

Հարցը կարմիր բանակայինին, թե ի՞նչ ե զգում, յերբ
գնդակը հրացանի փողաբերանից դուրս ե թուչում: Նա
ձեղ կասի, վոր հրացանի կոթն իր ուսին նարվածում է:
Հրացանի յետահարումն է այդ և բավականին ուժեղ է,
վորն անփորձ հրացանաձիգի ուսը սալջարդ ե անում—ցավ
պատճառում և նույնիսկ կանգնած տեղից գետին գլորում:
Հրացանաձիգը պետք ե իմանա, թե կրակելու ժամանակ
ի՞նչպես պետք ե կանգնել և ի՞նչ ձեռվ պետք ե հրացանը
բանել, վորպեսզի իրեն վաս չպատճառի:

Իհարկե, թնդանոթը կրակելու ժամանակ յետահարումն
ավելի ուժեղ է: Նախկին կառուցվածքի թնդանոթները
կրակելու ժամանակ ծանր հրետանին նարվում եր դեպի
յետ: Ժամանակակից թնդանոթները կրակելիս դեպի յետ
ե սահում միայն փողը, իսկ հրետանոցն անշարժ մնում ե
իր տեղում:

Ի՞նչ նմանություն և ի՞նչ զանազանություն կա հրա-
զենի և ուսկետի մեջ: Վառողի այրման ժամանակ նրանց
մեջ առաջացած վառողային գազն ամեն կողմի վրա ճնշում
ե գործում: Նմանությունն այս է: Իսկ տարբերությունն
այն է, վոր հրազենի մեջ գլխավորը գնդակի արտաթափչն
է, իսկ ուսկետի մեջ գլխավորը յետահարումն է, այդ յետա-
հարման ուժի շնորհիվ է, վոր ուսկետը թուչում ե դեպի
վեր: Մյուս տարբերությունն այն է, վոր հրազենի վիցքը
մի ակնթարթումն ե բռնկվում, իսկ ուսկետի լիցքն այրվում
ե զանդաղորեն, աստիճանաբար:

Հիշենք ամենակարևորն այն ամենից, ի՞նչ վոր մենք
հիմա իմացանք.

1. Ռակետը թուչում ե այն պատճառով, վոր գազը ներ-
քուստ ճնշում ե նրան:

2. Ռակետը թուչելու ժամանակ ոդին չի հենվում:

3. Ռակետը կարող ե թուչել դատարկության մեջ:

4. Ռակետի լիցքը վայրկենապես չի բռնկվում, ինչպես
այդ լինում ե հրազենների լիցքի հետ, այլ աստիճանաբար,
այդ պատճառով ել ռակետն իր արագացումը միանդամից
չի ստանում, այլ աստիճանաբար և առանց վորևե ցնցումի:

Հիմա արդեն հասկանալի յե, թե ինչու համար յերկ-
նային նավեր հնարողներն այդ բանի համար վորպես որի-
նակ հատկապես ռակետն են ընտրել: Չե՞ վոր միայն ռակետը
կարող ե իր ճնշման շնորհիվ շարժվել լուսնի և յերկրագնդի
միջև ընկած դատարկ տարածությունով: Միայն ռակետի
որինակով կառուցված նավը կարելի յե այնպես սահուն
կերպով բաց թողնել յերկնային թոփչքին, վոր նրա մեջ
նստած ճանապարհորդներն անվնաս մնան:

Մնում ե, վոր ռակետը փոխարկեն մի այնպիսի թռչող
մեքենայի, վորը կարողանա մարդկանց բարձրացնել: Թե
ինչպես պետք ե այդ անել դրա մասին այս գրքում կլսուի
հետագայում:


Բայց նախ խոսենք այն մասին, թե մինչև հիմա ինչ-
պիսի նպատակների համար են գործածել ռակետները:

Խ2Ի ՀԱՍԱՐ ԵՆ ԳՈՐԾԱՆՌՈՒՄ ՌԱԿԵՑՆԵՐԸ

Զպետք ե կարծել, վոր ռակետները գործածում են միայն
ժողովրդական տոները զարդարելու համար: Նրանց ոգտագոր-
ծում են նաև ուրիշ պետքերի համար:

Առաջ, յերբ գեռ թնդանոթներն այնքան արագածիդ և
կատարելագործված չեյին, ինչպես այժմ, ռակետներն
ոգտագործում եյին ուռմբեր (բոմբ) փոխաձդելու համար.
ռակետների տարած բոմբերը հակառակորդի բանակում առա-
ջացնում եյին ավերումներ և հրդեհներ: Առաջին անգամ
այդպիսի մարտական ռակետներով ոգտվել են հնդիկները:
Սրանից ավելի քան հարյուր տարի առաջ նրանց բանա-
կում յեղել են հազար սովորած մարդուց կազմված ռա-
կետային ջոկեր:

Շատով անգլիացիները սովորեցին ճնդիկներից խոշոր
մարտական ռակետներ պատրաստելը: Անգլիական բանակն
ուներ մինչև քսան կիլոգրամ քաշ ունեցող ռակետներ-
այդպիսի ռակետներով նրանք մի քանի կիլոմետր հեռավո-
րությամբ ռաւմբեր եյին գցում:




Նկ. 20. Ռակետի ոգտակար ծառայությունը Շովայինները սուզվող նավի վրա
ափից գցում են մի մեծ ռակետ, վորը տանում է պարանի ծայրը. այսպիսով
կազ ե հաստատվում սուզվող նավի անձնակազմի հետ:

Անգլիացիներից հետո ուսկետային ոռումբերով սկսեցին ոգտվել նաև ավստրիացիներն ու գերմանացիները։ Մարտական ուսկետները շատ գեպքերում հարմար թնդանոթ ելին հանդիսանում, վորովհետև դրանցից ոգտվելու համար անհրաժեշտ չեր լինում իրենց հետ քաջ տալ ծանր հրետանին։ Բայց հետագայում հրետանային գործն այնքան զարգացավ, վոր ոռումբեր գցելու համար այլևս մետք չուներ ուսկետներ գործածել. թնդանոթներն ավելի հեռու և ավելի զիազուկ ելին գցում, և զլխավորն այն ե, վոր հակառակորդին թույլ չփ տրվում մոտենալ այն տարածությունը, վորն անրաժեշտ եր ուսկետով ոռումբ գցելու ժամանակ։ Այս պատճառով ել յեզրոպական բանակներում դադարեցին ուսկետներ գործածել. Բայց շատ հնարավոր ե, վոր ուսկետային տեխնիկայի հետագա զարգացման շնորհիվ նորից արդպիսի արկերի վերադառնան։

Մեր որերում ուղմական գործում ուսկետները կերառվում են. նրանք ծառայում են զիշեր ժամանակ հակառակորդին լուսավորելու համար։ Ռակետը գցում են բարձր, և նա իր կրակով բավականին հեռու տարածության վրա լուսավորում ե թշնամու դասավորությունը։ Կարմիր բանակում գործածվող «լուսատու» ուսկետներն ունեն յերեք քառորդ մետր յերկարություն, վորոնց վրա ամրացված են մեկ ու կես մետր յերկարությամբ ձողեր («պոչեր»)։ Այդպիսի ուսկետը մոտ տասնըշվեց կիլոգրամ ե կշռում։ Վառելուց հետո մի ամբողջ կիլոմետր թեք դրությամբ թռչում ե և թռիչքի վերջում ցըռում ե փայլուն աստղեր. այդաստղերն այրվում են մի քառորդ րոպե և այդքան ժամանակ լուսավորում են շրջապատը։

Բացի «լուսատու» ուսկետներից՝ կարմիր բանակում գործում են նաև ազդանշանային ուսկետներ։ Դրանք ծառայում են զիշեր ժամանակ իր զորամասերին ազդանշան տալու համար. շատ վեր բարձրացած ուսկետը յերեսում ե հեռու տարածությունից։

Վերջին ժամանակներս սկսել են այնպիսի ուսկետներով ոգտվել, վորոնց ոգնությամբ կարելի յե չափազանց վեր հանել լուսանկարչական ապարատը և այնտեղից նկարել հակառակորդի դասավորությունը։ Լուսանկարչական ուսկետը թռչում ե մինչև վեց հարյուր հազար մետր։ Այս-



Նկ. 21. Ուսկետային փոստի առաքումն Ավստրիայի Իհանոս վայրերում, Ռակետն իր հետ տանում ե նամակներ, վորոնք այդպիսով արագ կերպով հասնում են հարեւան փոստային բաժանմունքին, վորն անանցանելի վայրում ե գտնվում։

պիսի բարձրությունից հարթ տարածության վրա կարելի
յե հայուրավոր կիլոմետր բոլոր կողմերի վրա տեսնել:

Ռակետն ոգուտ ե տալիս նաև ծովայիններին: Հաճախ
այսպես ե պատահում, վոր հնարավոր չի լինում նավակով
մոտենալ սուզվող նավին, վորն ափից քիչ հեռու խորտակ-
վել ե, իսկ ալեկոծվող ծովը շուրջ ե տալիս մոտեցող նա-
վակները: Այսպիսի գեղքերում ափից նավի վրա յեն գցում
մի մեծ ռակետ, վորն իր հետ տանում ե ամուր պարանի
ծայրը: Բոնելով պարանը՝ նավի անձնակազմն արդեն կապ
ե հաստատում ափի հետ:

Վերջապես ռակետն ոգտակար կիրառում ունի նաև
խաղաղ կյանքում: Նա ծառայում ե կարկուտի գեմ պայ-
քարելու համար: Հակակարկության ռակետները հատկապես
այն չափերով ոգտագործում են Շվեցարիայում և մեզ
մոռ՝ կովկասում: Հազիվ սկսում ե մի քանի կարկուտ
ընկնել, շվեցարացին բաց ե թողնում յերկու — յերեք ռա-
կետ, և այդ մեծ մասամբ բավական ե, վոր կարկուտի
փոխարեն անձրև թափի: Գցած յերեք ռակետը մոտավորա-
պես մեկ քառակուսի կիլոմետր տարածություն պաշտպա-
նում ե կարկահց, իսկ նրա շրջապատում վոչ թե անձրև
ե գալիս, այլ կարկուտ: Իմիջի ալոց այս հակակարկության
ռակետների ազդեցությունը գեռնս լրիվ չափով սառուգ-
ված չե:

Վերջին ժամանակներս Ավստրիայում հաջող փորձեր
են կատարվում դժվարանցանելի լեռնային վայրերը ռա-
կետով փոստ փոխածգելու ուղղությամբ: Գործն այնքան
հաջող ե գնում, վոր այս միջոցով ուղարկում են նույնիսկ
պատվիրված նամակներ և դրամական փոխադրություններ:

ՀԵՂՓՈԽԱԿԱՆ ԿԻԲԱԼՉԻՉԻ ԹՌՉՈՂ ՄԵՔԵՆԱՆ

Ամբողջ աշխարհում առաջինը հեղափոխական կիբալչիչն
ե յեղել, վոր մտածել ե ռակետը մեքենայի վերածել Սրա-
նից ափելի քան կես դար առաջ «Նարողնայա վոլյա» գաղտնի
կազմակերպության մի խումբ հեղափոխականներ նախա-
պատրաստեցին ցար Ալեքսանդր Ռի սպանությունը: Նա
սպանվեց ուրմբով, վորը հեղափոխականի ձեռքով նետվեց
նրա կառքի մեջ: Ռումբը պատրաստել եր քսանյոթ տարե-

կան հեղափոխական և գյուտարար Նիկոլայ կիբալչիչը:
Նա մի գիտակ և բանիմաց տեխնիկ եր, վորը կարողանում
եր պատրաստել թե պայթուցիկ նյութը (դինամիտ) և թե
ոռւմբի մեխանիզմը: Նա ճշգրիտ կերպով հաշվել եր, թե
ոռւմբի համար ինչըն գինամիտ պետք ե վերցնի, վոր
պայթելու ժամանակ համար իր նպատակին և միևնույն
ժամանակ «թագավորի անցնելու ժամանակ մայթի վրա
գտնվող մարդկանց և տներում գտնվողներին վոչ մի մաս
չհամար» (բերում ենք կիբալչիչի սեփական խոսքերը,
գատավարութան ժամանակ նրա տված ցուցմունքից):

Կիբալչիչը սպանության մյուս մասնակիցների հետ
միասին ձերբակալվեց ցարական իշխանության կողմից,
բանտարկվեց բերդում և դատի տրվեց: Հսկողության ռակ
գտնվող այդ հիանալի մարդը շատ քիչ եր մտածում
իրեն սպասող կախաղանի մասին: Նրա միտքը բոլորովին այլ
քանով եր զբաղված: Նա մտածում եր թոշով մեքենա հնա-
րելու մասին: Պետք ե նշել, վոր գեռ այն ժամանակ վոչ
սպառնակ կար և վոչ ել գիրիֆարեներ, կային միայն
ողապարիկներ, վորոնց վորևե ուղղություն տալ հնարավոր
չեր: Նրանք թոշում ելին միայն այն ուղղությամբ, ինչ
ուղղություն վոր քամին ուներ: Իսկ կիբալչիչը մտածում
եր այսպիսի մի մեքենա հնարել, վորին հնարավոր լինել
ցանկացած ուղղությունը տալ:


Կիբալչիչին, ինչպես նաև դատապարտվածներից յաւ-
րաքանչյուրին, պաշտպան նշանակվեց: Դեռ մինչև դատա-
վարությունը՝ պաշտպանն այցելեց նրան բանտում և զար-
մանքով տեսափ, վոր հեղափոխականը «ծանրաբեռնված
եր պրալտումներով: Նա այդ անում եր ինչ-վոր ողում
լողացող արկ հնարելու համար և նա շատ եր ցանկանում,
վոր իրեն հնարավորություն տան այս գուտի վերաբերյալ
եր մաթեմատիկական հետազոտությունները գրելու: Նա
այդ բոլորը գրեց և ներկայացրեց բանտային վարչությանը:

Մահվանից առաջ կիբալչիչը ինդրեց, վոր իր կազմած
նախագծերն ու նկարագրությունները ցույց տրվեն
բանիմաց մարդկանց: «Եթե իմ իզեան, — գրել ենա, — գիտ-
նական մասնագետների կողմից մանրամասն քննության
յենթարկվելուց հետո հնարավոր ճանաչվի, այդ դեպքում
յես ուրախ կլինեմ այն բանով, վոր հակայական ծառայու-

թյուն եմ մատուցում հայրենիքին ու ամբողջ մարդկությանը։ Այն ժամանակ յես հանգիստ սրտով կղիմավորեմ մահվանը, զիտենալով, վոր իմ իդեան ինձ հետ չի խորտակվում, այլ գոյություն կունենա մարդկանց մեջ, վորոնց համար յետ պատրաստ եյի զոհաբերել կյանքս»։

Բայց կիբալչիչին կախաղան հանեցին, առանց վորեւ մեկին ցույց տալու նրա գրությունները։ Մահափճուն

ի կատար ածելուց անմիջապես հետո գյուտի նկարագրության ծրարը վոստիկանությունը զցեց մի գաղտնի անկյուն։ Վորովինեւ վոստիկանությունը շատքիչ գործ ուներ թռչող մեքենաների հետ, այդ պատճառով ել կիբալչիչի գյուտը յերկար ժամանակ ամբողջ աշխարհի համար անհայտ մնաց։ Յերեսունվեց տարի կիբալչիչի գյուտը պարունակործ ծրարն ընկած մնաց ցարական վոստիկանության գաղտնաբաններում։ Յեվ միայն 1917 թվին, յերբ ցարական իշխանությունը տապալվեց, ծրարը բաց արին և նրա պարունակությունը հրատարակեցին։




Նկ. 22. Հեղափոխական նիկուայ իւնավուշ կիբալչիչը։ Նա առաջինը մտածեց, վոր ուակեար կարելի յէ փոխարկել թռչող մեքենայի։

Ի՞նչ եր ներկայացնում կիբալչիչի գյուտը։ Ի՞նչպես եր առաջարկում նա կառուցել թռչող մեքենա։

Այն, ինչ վոր մտածել եր կիբալչիչը, բոլորովին նոր բան եր։ Նրա թռչող մեքենան այն ժամանակվա ողապարիկներին նման չեր։ Այդ նման չեր նաև մեր որերի սակառնակներին և գիրիժաբաններին։ Չափազանց շատ և յեռանդադին զբաղվելով պայթուցիկ նյութերով՝ կիբալչիչը մտածեց զբանց ոգտագործելու միջոցը, վորպեսզի շարժման մեջ դնի թռչող մեքենան։

Ահա թե ինչպես եր պատկերացնում նա թռչող մեքենայի

կառուցվածքը։ 55-րդ եջի նկարի վերի անկյունում տրված ե կիբալչիչի վոչ ճիշտ գծագիրը։ Դուք նրանից բան չեյիք հասկանա, այդ գրված ե ավելի պարզեցրած ձևով։ Դուք նկարի վրա տեսնում եք մի հարթակ, վորի վրա ամբացված ե յեկու նեցուկ։ Նրանք պահում են յերկուսի միջև կախված մետաղյա ամանը։ Ամանի հատակը դարձրած ե դեպի վեր, իսկ նեղ բացվածքը՝ դեպի ներքև։ Նրա մեջ կա



Նկ. 23. Բերդում բանտարկված կիբալչիչը մինչև կախաղան հանվելն անդադար կերպով կաղմում եր թռչող ուակեային մեքենայի իր նախագիծը։


դանդաղ բռնկվող վառող։ Յերբ վառողը վառվում ե, ներսում առաջացնում ե մեծ քանակությամբ գագ, վորի համար ամանի ներսը նեղվածք ե։ Զգտելով դեպի բոլոր կողմերը լայնանալ, գացը ճնշում ե գործ գնում ամանի պատերի վրա և մի մասը բացվածքից դուրս ե գալիս դեպի ներքեւ։ Դուք արդեն գիտեք, թե ինչ պետք ե տեղի ունենա, ամանի կողային պատերի վրա յեղած ճնշումը միևնույն ե, բայց վերևի մասի վրա յեղած ճնշումն ավելի

մեծ ե, քան ներքին մասի, վորովհետև դուրս յեկող գազի հոսանքը վոչնչի վրա չի ճնշում, հետեաբար մեքենան պետք ե թոշի դեպի վեր, յեթե, ի հարկե, նա չափազանց ծանր չե:

Նկարագրելով իր մեքենան՝ Կիբալչիչը մատնացույց եր անում այն, վոր նա կարող ե վոչ միայն դեպի վեր բարձրանալ, այլ և թոշել դեպի ամեն կողմ, դեպի վոր կողմը վոր ցանկանում ե ազդել անձնակազմը: Դրա համար պետք ե միայն շուռ տալ գլանն իր փակ կողմով դեպի շարժման կողմը: Ռակետը միշտ թոշում ե գազի դուրս դալու կողմին հակառակ ուղղությամբ:

Կիբալչիչի ժամանակ դեռևս չգիտեյին դեկավարման յենթակա վորսե թոշող մեքենա կառուցել: Անա թե ինչո՞ւ, հավանորեն, Կիբալչիչը յերբեք իր մտածած մեքենայի մյուս հիանալի առանձնահատկությունների մասին չի հիշատակում, այսինքն այն, վոր նա կարող ե վոչ միայն ոդում թոշել, այլև անող տարածությունով: Կիբալչիչն իհարկե այդ գիտեր: Նա չեր պատկանում այն մարդկանց թվին, վորոնք սխալմամբ կարծում են, վոր իբր թե ուկեալ թոփչի ժամանակ հրվում ե գազի հոսանքով տակը գտնվող ողիք: Նրա գրություններում ուակետային մեքենայի թոփչի մասին միանգամայն ճիշտ բացատրություն ե տրված: Հետևաբար նրա համար միանգամայն պետք ե պարզ լիներ, վոր իր մտածած մեքենան թոփչի համար շրջապատի ողի կարիքը չունի և կարող ե նույնիսկ մըթնոլորտից այն կողմ թոշել: Յեթե Կիբալչիչն այդ մասին ակնարկներ չի արել, ապա ակներևաբար այդ նրանից ե, վոր դեռ ժամանակը չեր անդրմթնոլորտային թոփչի մասին խոսելու, այն ժամանակ, յերբ մարդիկ դեռ մըթնոլորտում չեյին կարող հաջող կերպով թոշել:

Թոշող մեքենայի մասին իր մտածածը Կիբալչիչը վերջնական բան չեր համարում: Նա շատ լավ եր հասկանում, վոր դեռևս ստուգման կարիք ե զգում և պետք ե գործնականում փորձարկվի, կամ ինչպես ասում են՝ պետք ե փորձը ցույց տա, թե ինչքան ե նա պիտանի: Կիբալչիչը գրել ե, վոր «Յես բավականաչափ ժամանակ չունեցա, վոր կարողանամ նախազիծ մանրամասնորեն մշակել և մաթեմատիկական հաշվումներով ցույց տալ նրա իրագործելի



Նկ. 24. Թե ինչ ձևով կարող եր իրագործվել Կիբալչիչի մտածած թոշող մեքենան, վերևում առանձին ցույց ե տրված մեքենայի կառուցվածքը:

Այդ աշխատանքը հետագայում կատարեց մի ռւրիշ հայտնի ռուս գյուղաբարար — Կոստանդին Եղուարդովիչ Յիոնկովսկին:

ՅԱԼԵԿՈՎՍԿՈՒ ՌԱԿԵՏԱՅԻՆ ՆԱՎԾ

Իսչպես մենք տեսանք, հեղափոխական կիբալչիչի մտածած մեքենայի նկարագրությունը համարյա քառասուն տարի ընկած մնաց ցարական վոստիկանության գաղտնաարաններում։ Նույն ժամանակիներում մի ուրիշ ոռւս գյուղաբար, ուսուցիչ Ցիոլկովսկին, նման միտք հղացավ։ Չնայած նա վոչինչ չգիտեր կիբալչիչի գյուտի մասին, բայց նրա միտքը նույնպես այդ ճանապարհով գնաց։ Նա իր մտածածը մշակեց մաթեմատիկորեն, այսինքն՝ այդ մեքենային վերաբերող բոլոր հաշվումներն ել կատարեց։ Նա հաշվումներով ապացուցեց այն բոլորը, ինչ փոր դեռ անապացուցելի յեր մնացել կիբալչիչի մոտ։ Նա ապացուցեց, փոր յեթե ռակետային մեքենայի լիցքը բավական մեծ ե, այդ դեպքում նա անպատճառ պետք ե բարձրանա և թուշի մնդիրն ամբողջապես այն ե, փոր մեքենան կարողանա վառելանյութի մեծ պաշար վերցնել և փոր նրա խողովակից գաղի հոսանքը նշանակելի արագությամբ դուրս գա։

Ինչքան շատ այրվի լիցքը և ինչքան արագ դուրս դան
գաղերը, այնքան մեծ արագություն և ունենում ուակե-
տային մեքենան:


Մենք գիտենք, վոր յերկրադնդից բաժանվելու և լուսնի վրա թռչելու համար անհրաժեշտ ե մեկ վայրկյանում վոչպակաս, քան տասնմեկ կիլոմետր արագություն։ Ցիոլկովսկին ճշգրիտ հաշվումներով ապացուցեց, վոր ուակետային նավը կարող է այդպիսի մեծ արագության հասնել. նա նույնիսկ հաշվել է, թե գրա համար ինչքան վառելանյութ պետք է վառել, և հատեսաեն վառ վառելանյութը:

Կիբալչիչն առաջարկել ե թոշող ռակետային մեքենան
լցնել այսպես, ինչպես լցնում են ռակետները վառողով։
Բայց մենք արդեն գիտենք, վոր վառողը չափազանց ան-
հուսալի նյութ ե։ Նույնիսկ փոքրիկ ռակետներ պատրաս-
տելու ժամանակ նրա հետ գործ ունենալը վտանգավոր եւ
Ցերեակայեցեք, թե ինչքան վտանգավոր գործ ե մեծ

թոչող մեքենան, մի ամրող ռակետային նավ, վառողով լցնելը. Այդպիսի դաշնակցին չի կարելի վստահել ճանապարհորդների կյանքը: Բայց ինչով պետք ե փոխարինել այս:

Ցիոլկովսկին ցույց տվեց, թե ինչնվ կարելի յե փոխարինել վառողքը։ Նա առաջին անգամ ուշադրություն դարձրեց այն բանի վրա, վոր վառողք միակ և բոլորովին ել ամենալավ նյութը չե ուակետները լցնելու համար։ Ահա ամենա ամենի լավ ե

Վորպեսզի ուակետայիրն սավը կարողանա համառա լու
կրագնդից, նա պետք ե ունենա վառելանյութի հսկայա
կան պաշար: Այդքան մեծ քանակիությամբ վասողը, հավա
նական ե, վոր դեռ նաև իր տեղից շարժվելուց առաջ կպայ
թեցներ: Վառողի այդպիսի մեծ պաշարի ամենափոքրիկ ցըն
ցումը, նույնիսկ իր սեփական ծանրության ճնշումը հեշ
տությամբ կարող ե պայթյուն առաջացնել, վորը կարո
ւ վոչ միայն նավը խորտակել, այլև ավերածության մաս
նել ամբողջ շրջապատը:




Նկ. 25. Խորհրդային գյուղատնտեսությունների վեցուաղին ծիռուարդովիչ Տիգլակով-սկի: Նա առաջինը կատարեց ապագա ռակիետային նավի հաշվութեաբու

Բացի շառաչող գազից, ռակետային նավի լիցքի համար պիտանի յեն նաև այնպիսի վառելանյութեր, ինչպիսիք են սպիրտը, նավթը, բենզինը և այլն, — իհարկե թթվածնի¹ նետ խառնած։ Այդ բոլորն ել ռակետի վրա պիելի լավ կաշսատեն, քան վառողը, միայն այդ նյութերը վառելու համար լավ հարմարանք պետք ե ստեղծել ձիշտ ե, վոր վառողը մի առավելություն ունի, վոր նա շատ արագ, համարյա վայրկենաբար այրվում ե։ Այդ պատճառով եք վառողի մասին ասում են, վոր նա վոչ թե այրվում ե, այլ պայթում։ Այս չափազանց մեծ առավելություն ե կրակելու համար, բայց ռակետի շարժման համար լիցքի արագ այրում հարկավոր չե և անպայման վտանգավոր ե ճանապարհորդների կյանքի համար։

Յիոլկովսկու մտածած ռակետային նավը նույնանման ե Կիբալչիչի մտածած թռչող մեքենային։ Բայց արտաքուստ այդ յերկու գյուտերը քիչ են նման իրար։ Կիբալչիչի թռչող մեքենան ունի մի հարթակ յերկու նեցուկներով, վորանք պահում են վառողով լցված մի մեծ գլան։ Իսկ հիմա տեսեք 59-րդ եջի նկարը, թե ինչպես եպ առկերացրել Յիոլկովսկին իր ռակետային նավը։

Նկարում նավի զրահի մի մասը հանված ե, վորպեսզի յերեա ներքին կառուցվածքը։ Նավի ներսում, նրա յերկարությամբ հետզհետե գեպի դուրս լայնացող մի խողովակ ե անցնում։ Այդ խողովակից պետք ե անցնեն լիցքի այրումից առաջացած տաք գազերը։ Խողովակի նեղ ծայրում հատուկ պոմպերի (նասոս) միջացով պետք ե քաշվի հեղուկ թթվածինը և մի ուրիշ վառվող հեղուկ (հեղուկ ջրածին, բենզին և այլն). այդտեղ նրանք խառնվում են և այրվում։ Յերկու հեղուկների պահեստարանն ել չափազանց մեծ ե. ինչպես տեսնում եք՝ նրանք բռնում են յերկնային նավի մեծ մասը։ Յիոլկովսկին հաշվել ե, վոր փոքր լիցք ունենալու գեպօրում ռակետային նավը պետք յեղած արագությունն ունենալ չի կարող։ Այրումից առաջացած գազը դուրս ե գալիս խողովակի լայն ծայրով և միևնույն ժամանակ ճնշում ե գործադրում ծայրի վրա և գրանով ստիպում ե, վոր ամբողջ ռակետը շարժվի այդ ուղղությամբ։

¹ Վառողը նույնպես այրվելու համար թթվածնի պետք ունի, բայց նա հենց իր մեջ թթվածին և պարունակում։



Նկ. 26. Թե Յիոլկովսկին ինչպես ե պատկերացնում իրեն՝ սպազա ռակետային նավի մոտավոր կառուցվածքը։

Յիոլկովսկու ռակետային նավի առաջին մասում տեղափորվում ե խուցը: Նա պետք ե դասավորվի և կահավորվի սուզանավերի կամ ստրատոստատի գոնդոլի խցերի որինակով: Այս մասին մենք հետաքայում գեռ կխոսենք:

Հավանաբար դուք ուզում եք իմանալ, թե վերջին հաշվով այդպիսի ռակետային նավս ինչնի ե տարբերվում ժյուլ Վեռնի մտածած թնդանոթային արկից: Մենք արդեն գիտենք, վոր մարդկանց համար անհնարին ե թնդանոթային արկով թոփչք կատարել, նրա մեջ ճանապարհորդները կկործանվեն: Իսկ ինչու համար հնարավոր ե համարվում ռակետային նավով թոչել: Չե վոր նա նույնպես յերկրագնդից պետք ե հեռանա հսկայական արագությամբ,—մի վարկյանում տասնմեկ կիլոմետր: Այստեղ տարբերությունն արագության մեջ չե, այլ այն ե, թե ինչպես ե ստացվում այդ արագությունը: Ինքնըսահնքաւն մեծ արագությունը մարդու համար վտանգավոր չե, մենք այդ արագությունը նույնիսկ չենք ել զգում, ինչքան ել վոր նա մեծ լինի: Վտանգավոր ե միայն արագության արագ աճումը: Թնդանոթային արկն իր արագացումը համարյա միանգամից ե ստանում, այստեղ արագացման աճումը վերին աստիճանի արագ ե տեղի ունենում, վորի հետևանքով զգացվում ե ամեն մի կենդանի արարածի կյանքի համար վտանգավոր ցնցում: Մակետային նավս, ընդհակառակը, իր արագացումն ստանում ե աստիճանաբար: Նա սկսում ե շարժվել չափազանց սահուն կերպով և աստիճանաբար սեծացնում ե արագացումը, քանի դեռ հսկայական արագության չի հասել: Աստիճանաբար զարգացող այսպիսի արագացումը կյանքին և առողջությանը վոչ մի վտանգ չի սպառնում:

Ահա ռակետային նավի առաջին ոգուար, վոր չունի թնդանոթային արկը: Մյուս ոգուար նույնպես չափազանց կարեւոր ե: Լուսնի վրա համելը գեռնս բավական չե, պետք ե նաև վերադառնալ: Անվերագարձ թոփչքը վոչ մի միաք չունի, թեկուզ և գտնվեն այսպիսի մարդիկ, վորոնը իրենց կյանքը կզոհեն իսեր այդպիսի մի ճանապարհորդության: Թնդանոթային արկով բոլորովին հնարավոր չե վերադառնալ, իսկ ռակետային նավով այդ միանգամայն հնարավոր ե: Միայն անհրաժեշտ ե իր հետ վառելանյութի այնքան

պաշար վերջնել, վոր մինչև լուսնին համեսելը ամբողջը չծախսվի: Նավը պետք ե լուսնի վրա իջնի վառելանյութի վորոշ պաշարով, վորը և կծառայի վերադառնալու համար:

Ահա թե ինչու ապագա ռակետային նավն ամենահարմար թոչող մեքենան ե լուսնի վրա ճանապարհորդելու համար: Իհարկե, ճանապարհորդության ժամանակ ողաջուները պետք ե ունենան իրենց խցի մեջ կյանքի համար անհրաժեշտ բոլոր պետքական բաները — ոդ, խմելիք, ուտելիք, նույնիսկ ելեկտրական տաքացում և լուսավորություն: Դեպի լուսինը թոչելն ու վերադառնալը պետք ե տեսի մոտ յերկու շաբաթ: Յերկու շաբաթվա ընթացքում մի քանի մարդու համար անհրաժեշտ խմելիքի և ուտելիքի պաշարն այնքան ել չի ծանրաբեռնի նավը: Թոփչքի ժամանակ շնչուության համար առանձնապես ոդի պաշար վերցնելու կարիք չկա, չե վոր նավի վրա վառելու համար թթվածնի մեծ պաշար ե լինելու, իսկ թթվածնը հենց այն գազն ե, վոր ծախսվում ե շնչառության ժամանակի ձանապարհին միշտ կարիք չի լինելու ելեկտրական տաքացում գործադրել, ճանապարհի մեծ մասում նավը լողալու յե արևի ճառագայթների միջով, վորոնք նրան բավար չափով տաքացնելու յեն: Գուցե և այնպես պատահի, վոր ճանապարհին նավի մեջ սոսկալի շոգ լինի: Մենք գիտենք, վոր ստրատոսփեր բարձրացող ողագնացները, վորտեղ ոդը մինչև 50 աստիճան ցուրտ ե, յերբեմն տառապել են շոգից, բայց վոչ ցրտից: Իմիջի այլոց այս դժբախտության առաջն առնելու համար նույնպես լավ միջոց կա — հեղուկ թթվածին այնքան ե պաղեցրած, վոր յեթե արդ հեղուկ կից մի փոքր քանակությամբ խցի մեջ ցանեն, այնտեղի ոդն անմիջապես կզովանա:

Հիմա մի քանի խոսք ասենք իրեն՝ Յիոլկովսկու մասին: Իր մի շարք գլուխերով հոչակված այս ականավոր մարդը ներկայումս արդեն յօթանասունհինգն անց տարիք ունի: 1932 թվին ամբողջ խորհրդային հասարակայնությունը մեծարեց նրա 75-ամյակը: Յիոլկովսկին ծնվել ե մի վերին աստիճանի աղքատ աշխատավորական ընտանիքում, վորն ի վիճակի չել նրան նույնիսկ տարրական դպրոցական կրթություն տալու: Նա իր լայնածավալ գիտելիքները ձեռք ե բերել առանց վորես կողմից ոգնություն ստանալու,

այլ ինքնուրույն կերպով զրքեր կարդալով։ Նա քառասուն տարի յեղել ե ուսուցիչ և իր ամբողջ ազատ ժամանակը գործադրել ե իր գյուտի վրա հետազոտութեան և ուսումնասիրություններ կատարելուն։ Յիշլկովսկու գյուտերը վերաբերում են սավառնակներին, ողալին նավերին և ուակետային թոփչքներին։ Նախ քան արտասահմանում առաջն թուշող մեքենան կառուցվելը, նա արդեն կատարել եր սավառնակների հաշվումները։ Ճիշտ նույնպես ել նա թուչող նավի հաշվումների մեջ առաջ անցավ արտասահմանյան գիտնականներից։ Նրա մտածած ողալին նավը, վորն ունի մետաղե զրահ, մի շարք կարեոր առավելություններ ունի ներկայումս գոյություն ունեցող դիրիժարների համեմատությամբ։ Յիշլկովսկու դիրիժարը պետք ելինի եթան, անվտանգ և արգի ողալին նավերից ավելի յերկար դիմացող։ Բայց Յիշլկովսկու հնարքներից ամենից զարմանալին և ամենից ուշագրավը նրա ուակետային նավով լուսնի վրա թուչելու պլանն ե, վորի մասին յես հենց քիչ առաջ պատմեցի։

Յերկար տարիներ վոչվոք չեր գնահատում Յիշլկովսկու աշխատանքները, չեյին ըմբռնում նրա գյուտի կարեորագույն նշանակությունը և վոչ մի ոգնություն չեյին ցույց տալիս։ Նրա գյուտերին ուշագրություն դարձրին և ոժանդակեցին միայն հեղափոխությունից հետո, յերբ խորհրդային իշխանությունն ու խորհրդային հասարակայնությունը գնահատեցին նրա ծառայությունը։

Յիշլկովսկին մշտապես ապրում ե կալուգա քաղաքում և, չնայած իր ծերացած տարիքին, անխոնջ զբաղվում է իր գյուտերով։ Յես նրանից ստացա մի շարք կարեոր ցուցումներ, վոր ոգտագործել եմ իմիջի այլոց նաև այս դիրքը կազմելիս¹։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԸ

Կիբալչին ու Յիշլկովսկին միակ գյուտարարները չեն, վորոնք մտածել են ուակետի նմանող թուչող մեքենաներ հնարել։ Ավելի ուշ այդ մտքին են հանդել նաև մեր հայ-

¹ Ով ցանկանում ե Յիշլկովսկու մասին շատ բան իմանալ, թող կարդա Յ. Ի. Գերելմանի «Յիշլկովսկին», նրա կյանքն ու գիտական աշխատանքները»

բենիքի սահմաններից գուրս գտնվող մի շարք գյուտարարներ, որինակ՝ Ամերիկայում և Գերմանիայում։ Ինչպես վոր Յիշլկովսկին վոչինչ չգիտեր Կիբալչիչի թուչող մեքենայի մասին և քսան տարի հետո, բոլորովին ինքնուրություն կերպով, հանգեց բարձր թոփչքի համար մի հակայական ուակետու կառուցելու մտքին։ Նա սովորական ուակետի կառուցվածքը լավացնելու համար կատարել ե մի շարք ուսանելի փորձեր։ Իմիջի այլոց նա գործնականում ցույց տվեց, վոր անող տարածությունով ուակետները վոչ միայն վատ չեն թուչելու, այլև ավելի լավ են թուչելու, քան ողի մեջ։

Իսկ մի քանի տարի հետո հանդես յեկավ գերմանացի գիտական Որերտի գիրքը, վորը վոչինչ չգիտեր վոչ Կիբալչիչի, վոչ Յիշլկովսկու և վոչ ել Գոդդարդի մասին։ Նա նույնպես հանգել եր ուակետի սկզբունքով թուչող մեքենա կառուցելու մտքին։ Ինչպես Յիշլկովսկին, նա ել առաջարկում ե վառողը փոխարինել հեղուկ վառելանյութով, ինչպես, որինակ, սպիրտով, հեղուկ ջրածնով և այն, վորոնց այրելու ժամանակ պետք ել խառնել հեղուկ թթվածին։ Նա կատարել ե բազմաթիվ հաշվումներ, և դրանք չափազանց կարեոր են այն մարդկանց համար, վորոնք իր ժամանակին ուակետային թուչող մեքենաներ են կառուցելու։ Նա մտածել ե և մի քանի մեծ ու վորքը ուակետային մեքենաների կառուցվածքի մասին, վորոնք պետք ե ծառայեն զանազան նպատակների համար։


Ի՞նչ ե նշանակում իրար մասին զաղափար չունեցող այս չորս գյուտարարների մտքերի նույնանման լինելը։ Ինչու համար մեկը մյուսից այնքան հեռու ապրող մարդիկ միևնույն մտքին են յեկել։

Իհարկե դրա պատճառն այն ե, վոր այդ մարդիկ տիեզերական թոփչք կատարելու ուղղությամբ իրենց առաջ զրված խնդիրը միասնաբար ճիշտ են լուծել։ Իսկ յեթե զորս գյուտարարներ մեկը մյուսից անկախ կերպով միենույն բանն են մտածել այդ արդեն անկասկածորեն ապացուցում ե այն, վոր նրանք բոլորն ել ճիշտ ճանապարհով են գնացել։

ԽՈՍՔԻՑ ԳՈՐԾԻ ԱՆՑՆԵԼԸ

Յերբ վերջին տարիներս ուակետային մեքենաների գյուղարարներն ուղղում եյին՝ ինչ վոր մտածել եյին, նրա գործադրմանն անցնել, նախ և առաջ իրենց առաջ այսպիսի մի հարց դրին, թե ի՞նչպես ստուգեն, վոր իսկապես ուակետը կարող ե վոչ միայն իրեն շարժել, այլև մի ամբողջ մեքենա: Այս նպատակով մի շարք փորձեր են կատարվել ուակետներով գետնի վրայից սայլակներ շարժելու:

Այդ տեսակի վորճ առաջին անգամ կատարել են ավտոմոբիլների վրա: Հանել են ավտոմոբիլի շարժիչ մոտորը և թափքի (կոզովա) հետին մասում գրել են հսկայական ուակետներ: Տասներկու ուակետ կրող ավտոմոբիլի




Նկ. 27. Ռակետային ավտոմոբիլ: Փորձարկման ժամանակայի մեքենան անցակ մի ժաման 220 կիլոմետր արագությամբ

Մի քանի փորձարկումներից հետո փորձը հաջող անցավ: Ռակետները մեկը մյուսի յետելից վառելով (ելեկտրական կայծով), ավտոմոբիլն առաջ սլացավ արագացող շարժումով և տաս վալրկյանից ավելի կարճ ժամանակում անցավ մեկ ժամում հարյուր կիլոմետր արագությամբ: Յերկրորդ փորձը կատարվել ե. լավ կառուցվածք ունեցող ավտոմոբիլի վրա: Նա այնպիսի ձեւ ուներ, վորի շնորհիվ ճեղքում եր առաջի ողբ: Այդ ավտոմոբիլը կողքերին թևեր ուներ, բայց վոչ թե նրա համար, վոր ողբ բարձրանա, այլ ընդհակառակը, նրա համար, վոր նրան թույլ չտա գետնից կտրվելու: Սրա վրա յերկու անգամ ավելի

շատ ուակետ եր զրկած, քան առաջին փորձում, — քսանչորս հատ: Յերբ սկսեցին այդ ուակետները վառել, ավտոմոբիլը պոկ գալով տեղից առաջ սլացավ՝ զարգացնելով մեկ ժամում յերկու հարյուր քսան կիլոմետր արագություն:

Յերբորդ փորձի ժամանակ յերեսունվեց ուակետ ունեցող ավտոմոբիլը մեկ ժամում հասավ յերկուհարյուր քառասուն կիլոմետր արագության:

Հետևյալ փորձը կատարվեց ուակետավոր ավտոմոբիլի վրա, այսինքն՝ ուելսերի վրա զրված ավտոմոբիլի, վորի



Նկ. 28. Ռակետային գրեղին Փորձարկման ժամանակ նա հատել է 180 կիլոմետր արագության:

մոտ շարժիչի գերը կատարում եյին ուակետները: Այնպիսի մեծ արագություն եր սպասվում, վոր վտանգավոր եյին համարում նրա վրա մարդ նստեցնել, և վորոշվեց փորձը կատարել առանց կառագնացի: Յեկ վորպեսզի ստուգեյին, թե արագության արագ աճումն ինչպես ե ազդում առօղջության վրա, ավտոմոբիլի վրա վանդակի մեջ փակված մի կատու դրին: Մեքենան յերկու անգամ բաց թողին քսանչորսական ուակետներով: Առաջին անգամ նա անցավ մի ժամում հարյուր ութսուն կիլոմետր արագությամբ:

Յերկրորդ անգամ ավելի մեծ արագություն եյին սպասում, բայց փորձարկումը դժբախտությամբ վերջացավ.

մեքենան գուրս յեկավ ռելսերից և զլորվեց զառիվայրի տակ. ռակետները բոլորը միասին մի անգամից պայթեցին և խորտակեցին ավառմոբիլը: Կործանվեց նաև ավտոդրեգենի չորքոտանի ճանապարհորդը:

Ռակետների ողնությամբ կարելի յե սայլակներին չափազանց մեծ արագություն հաղորդել բայց անիմսերը չափազանց մեծ թվով պատույտներ անել չեն կարող: Չափազանց շատ պատույտներ անելու ժամանակ անիմսերը մասերի յեն բաժանվում: Ահա թե ինչո՞ւ համար սկսեցին փորձեր կատարել ռակետային սահնակներով. այստեղ անիմսեր չկան, և հնարավոր ե առանց վորեւ վտանգի հսկայական արագություն հաղորդել: Ժամութ ռակետ անեցող սահնակները յերկու անգամ ավելի մեծ արագության են հասել, քան ռակետային ավտոմոբիլները, նրանք մի ժամում հասել են չորսհարյուր կիլոմետր արագության: Հետաքրքիրն այն ե, վոր ճանապարհի մեծ մասում (ճիշտ ե՝ վոչ այնքան յերկար) սահնակի հիմնաձողերը (սլկաններ) ձյուն վրա վոչ մի հետք չեն թողել: Ակներևաբար պարզ ե, վոր սահնակը ձյունից բարձրացել ե ողի՞ մեջ:

Այս փորձերն այն նշանակությունն ունեն, վոր ցույց են տալիս, թե ռակետներն ինչպիսի ուժ կարող են զարգացնել: Բայց սխալ կլինի մտածել, թե ապագայում ավտոմոբիլների մեջ շարժիչների փոխարեն կսկսեն ռակետներ գործածել: Զեռնտու չե այդ անել, վորովհետև այն արագությունների համար, վորով կարող ե զնալ ավտոմոբիլը, ռակետների գործածելն ավելի թանգ ե նստում: Ռակետներն ոգտակար են միայն մեծ արագությունների դեպքում: Չափազանց մեծ արագությամբ կարելի յե շարժվել միայն շատարկ տարածությունով, վորտեղ ողը չի խանգարում շարժմանը, և վորտեղ ստիպված չեն լինում արգելքների հանդիպելով դարձում կատարել:

Դուք տեսնում եք, վոր ռակետը պետանի յե մթնոլորտից դենը թոշելու համար: Փորձեր են կատարվել նաև մոտոցիկլետների, հեծանիվների և նույնիսկ ռակետային սավառնակների հետ, այսինքն այնպիսի սավառնակների, վորոնց մոտորը փոխարինված ե ռակետով: Փորձերը ցույց են տվել ռակետների լրիվ ոգտակարությունը նաև սավառնակների համար: Այնուամենայնիվ, մթնոլորտի խիտ մասե-

րում կատարվող թոփչքների համար ռակետներ չեն գործածվելու, թերևս դրանք կիրառվեն ստարտը (այսինքն թոփչքի ռկիզը) հեշտացնելու համար:

Բայց ռակետներն անփոխարինելի միջոց են հանդիսանում մթնոլորտի ամենավերին շերտերը թոշելու համար, վորտեղ նոսրացած ողը չի կարող պահել սովորական սավառնակներն ու ողային նավերը:

Հենց նույն այդ փորձերն ել ցույց տվին, վոր անհրաժեշտ ե ամբողջապես հրաժարվել այնպիսի մի վտանգավոր վառելիքից, ինչպես վառողն ե, և այն փոխարինել ավելի անվտանգ վառվող հեղուկներով՝ սպիրտով, բենզինով, հեղուկ ջրածնով և այն:

Վորպեսպի գործն առաջ շարժվեր, դրա համար նախ պետք ե սովորելին այնպիսի ռակետներ պատրաստել, փորոնք լցված լինելին հեղուկ վառելանյութով:

ԱՌԱՋԻՆ ԳԱՅԼԵՐԸ

Վառողային ռակետները գեռ շատ վաղուց ե, վոր գործածվում են, և մարդիկ սովորել են այդպիսի ռակետներ շատ լավ պատրաստել: Խոկ հեղուկ լիցք ունեցող ռակետներ պատրաստելու մասին գեռ մոտիկ ժամանակներու են սկսել մտածել: Վերջիններիս կառուցվածքն այնպես պարզ չե, ինչպես վառողային ռակետներինը:


Ճիշտն ասած՝ վառողային ռակետն առանձնապես մի հատուկ կառուցվածք չունի, նրա ամբողջ ներքին մասը կազմված ե վառողի զանգվածից: Այսպիսի ռակետը մի անգամ վառելուց հետո ալևս հետագա այրման համար զեկավարում չի պահանջում, լիցքը մինչև վերջը ինքն-իրեն այրվում է: Խոկ բանն այլպես չե վառվող հեղուկների հետ Ռակետի մեջ վառվող հեղուկի և հեղուկ թթվածնի համար անհրաժեշտ ե ունենալ այրման տեղից անջատ հատուկ տեղեր: Բացի այդ, պետք ե մտածելին այնպիսի մի կառուցվածք ստեղծել, վորն ինքն-իրեն յերկու հեղուկից ել քիչ առ քիչ մատուցեր ալրման վայրին, այսինքն այն տեղ, վորտեղ տեղի յե ունենում այրումը: Միևնույն ժամանակ պաշարի մնացած մասը պետք ե ապահովել իրար խառնվելուց և պայթելուց:

Միայն վերջին ժամանակներս են սկսել հեղուկ լիցք ունեցող ռակետներ պատրաստել: Այս ասպարեզում հատկապնդ յեռանդու աշխատանք ե կատարել գերմանական գիտնական Որերտը, վորը դեռևս տասնչորս տարեկան հասակից սկսած մտածել ե անդրմթնոլորտային թոփշըն իրագործելու մասին: Մենք արդեն առաջուց ասել ենք, վոր այդ գիտնականը վոչինչ չգիտենալով մյուսների մասին, ինքն ինքնուրույն կերպով հանգեց ռակետային նավի կառուցման մտքին:

Գերմանացիներին հաջողվել ե կառուցել մարդու հասակի չափ մի ռակետ, վորը բոլորովին նոր տիպի յե և թոշում ե հեղուկ լիցքով: Այդ ռակետն արդեն մի քանի անգամ փորձարկվել ե Բեռլինում և փայլաւն արդյուներ ե տվել: Նա ավելի քան հարյուր անգամ թոփշը ե կատարել: Ճիշտ ե, զեռեա այնքան ել բարձր չի թոչել, բայց այդ ել բավական ե նրա կառուցվածքի պիտանիությունն ապացուցելու համար:

Յեթե այդ ռակետի ներկայիս կառուցողները փող

ունենան, նրանք մտադիր են մի ավելի մեծ ռակետ կառուցել և այնպիսի մեծ լիցքով, վոր նա կարդանա հարյուր կիլոմետր թոչել դեպի վեր: Այդ արդեն մի նշանակալից հաջողություն կլինի յերկինքը նվաճելու ճանապարհին և գիտությանը մեծ ոգուտ կտա: Արդպիսի բարձրության վրա դեռ չի հաջողվել վոչ մի ոդային գունդ հասցնել, նույնիսկ առանց մարդու: Առանց մարդու գնդի ամենաբարձր թոփշը յերեսունվեց կիլոմետրից ավելի չի յեղել: Ճիշտ ե, պատահել ե, վոր հաջողվել ե թնդանոթային արկը հասցնել մինչև 50 կիլոմետր բարձրության, բայց չե վոր



Նկ. 29. Գրոֆենոր Ֆիզիկոս Հերման Որերտ, վորն Արմետայն Շեֆ-Ռուպայում ռակետային գործի ամենայերելի գիտակն ու աշխատողն ե:

ցած ընկնող արկերը և վոչ մի տեղեկություն չեն կարող բերել այն բարձրության մասին, վորին իրենք հասել են: Այս պատճառով ել գիտնականներին համարյա վոչինչ հայտնի չե յերեսունվեց կիլոմետրից բարձր յեղած ողի վիճակի մասին: Նրանք միայն կարող են կռահել այն մասին, թե այստեղի ոգն ինչից ե կազմված, ինչքան ե նոսրացած, ջերմաստիճանն ինչքան ցածը ե և այլն:

Դուք ի հարկե հարց կտաք, թե ինչպես կարելի յե այդ իմանալի յերբ ռակետի վրա մարդ չի բարձրանում: Լրիվ չափով մարդուն կարող են փոխարինել գործիքները, վորոնք այնպես են դասավորված, վոր իրենք զրի յեն առնում իրենց ցուցումները: այս մասին արդեն խոսվել ե զրքի սկզբում: Որինակ, գիտնականներն այնպիսի ջերմաչափեր են նարել, վորոնք իրենք իրենց զրի յեն առնում բարեխառնության աստիճանը: հնարել են նաև ուրիշ ինքնազիր գործիքներ: Ռակետն իր հետ կրարձրացնի այդ ինքնազիր գործիքները, վորոնք այնուհետև ցած կիջնեն պարագյուտներով և պարացյուտի շնորհիվ վայրեջքն այնքան դանդաղ կկատարվի, վոր գործիքները գետին ընկնելիս չեն տուժի:


Բայց չկարծեք, վոր դրանից անմիջապես հետո հնարավոր կլինի լուսնի վրա թռչելու համար կառուցել մեծ ռակետ: Վոչ, դեռ նախքան լուսնի վրա թռչելը, ռակետը զարգացման մի յերկար ճանապարհ անցու ե անցնի, աստիզարդար, քայլ առ քայլ նա պետք ե մոտենա ռակետանաբար, կիրառ կատարել արդեն հնարավոր կլինի յերկնային յին նավին, վորով արդեն հնարավոր կլինի յերկնային առարածության մեջ հեռավոր ճանապարհորդություն կատարելու:

Վորն ե լինելու ռակետի զարգացման յերկրորդ քայլը: Հավանութեն ալդ կլինի այնպիսի մի մեծ ռակետի կառուցումը, վորով Յեվրոպայից Ամերիկա և գեպի յետ—ովկիանոսի վրայով փոստը կտեղափակեն: Նամակներով ծանրաբեռնված ռակետն ովկիանոսը կանցնի վոչ ողի միջով: Նրա ճանապարհի մեծ մասը մթնոլորտից ավելի բարձր ընկած կլինի: Ռակետը դուրս կթռչի մթնոլորտից և գատարկ առածությունով մի քանի հազար կիլոմետր անցնելուց հետո, յերբ արդեն մոտեցած կլինի Ամերիկայի մայր քաքին, գետնին իջնելու համար նորից կիջնի մթնոլորտի

մեջ։ Դատարկ տարածության մեջ շարժման համար վոչ մի խոչընդուռ չկա, հետևաբար այդ խոզոր տարածությունը կարելի յէ անցնել հսկայական արագությամբ, այսինքն կես ժամում, Յերևակայեցեք, փոստը, վոր նավը մինչեւ Ամերիկա հացնում ե համարյա մեկ շաբաթից, պետք ե հասնի արդեն կես ժամից։ Այդ վոչ միայն չափազանց արագընթաց փոստ ե, այլև շատ եժան և նստում։ Ճիշտ ե, վոր ռակետի առաքումը մի քանի հազար կոստի, բայց չե՞ վոր նա իր հետ մի նամակ չի տանի, այլ մի քանի հազար նամակ։ Ուրեմն ռակետային փոստով ուղարկված յուրաքանչյուր նամակ մեզ վրա կնստի մոտ մեկ ռուբլի։ Այսպիսի փոստն իր արագությամբ գերազանցում է նույնիսկ հեռագրին։ Յեթե մի քանի հազար նամակի բովանդակությունը բառ առ բառ հեռագրով փոխանցեյին, այդ գեպօտմ վոչ թե կես ժամ կպահանջվեր, այլ ամբողջ որեր, և յուրաքանչյուր նամակը վոչ թե մեկ ռուբլի կնստեր, այլ մի քանի հարյուր ռուբլի։ Դուք տեսնում եք, վոր ռակետային փոստը չափազանց ոգտակար կլինի և նրանով սիրով կողտվեն։ Բայց դրա հետ միասին ավելի ևս կզարդանա ռակետային գործը և այդ իր հեռթին ավելի կզարդացնի ռակետային փոստը։

Փոստային ռակետից հետո անհրաժեշտ կլինի կառուցել ռակետային սավառնակներ, փորոնք դեպի Ամերիկա կտեղափոխեն ճանապարհորդներ:

Սյդ սավառնակները վոչ միայն ջրային ովկիանոսի վրայով կթուշեն, այլև ողային ովկիանոսի, վրայով — մթնությունի վրայով։ Այստեղ վոչ փոթորիկ կա, վոչ ձյուն և վոչ ել մշուշ, վոչինչ չկա՝ թոփչքը խանգարող։ Դրանք այնպիսի արգելքներ են, վորոնք չափազանց խանգարում են ովկիանոսների վրայով սովորական սավառնակներով ու զիրիժարլներով կատարվող ճանապարհորդությունը։ Այսպիսով մայր ցամաքների մեջև յեղած հաղորդակցությունը կարելի յե ճիշտ կերպով կանոնավորել, նախորոք կարելի յե ռակետային սավառնակի ժամանելու ժամկետը նշանակել, ճիշտ այնպես, ինչպես հիմա ճշգրիտ կերպով նշանակում են յերկաթուղային գնացքների ժամանելու ժամանակները։ Ճիշտ ե, վոր մթնոլորտից բարձր տարածության մեջ շնչելու համար վոչինչ չկա, բայց ոգաչուները կա-



Նկ. 30. Գերամանիայում բաց են թողովում սեպտեմբերի լիքը ուսեղող ու ակնեարի խո-
շը Աջ կողմից վերևում առայց ե արքած արդ մոգելի ներքին կա-
զմ մոգելը Աջ կողմից վերևում առայց առաջաձգած քը:

ըող են իրենց հետ ող (թթվածին) վերցնել. հենց հիմա յել այդպես են անում ոգաչուները, յերբ նրանք բարձրանում են ստրատոստատներով, կամ թե չե սավառնակներում մթնոլորտի վերին շերտերում թոփչք կատարելիս, վորտեղ ողի նուրության պատճառով դժվար ե շնչել:

ՆԱՅԵՆԺ ԴԵՂԻ ԱՊԱԳԱՆ


Ծատ տարիներ հետո, յերբ մեր բոլոր այստեղ ասած-
ները կհաջողվի աստիճանաբար կատարել, և հսկա ռակետ-
ներ կառուցողներն իրենց գործում մեծ փորձ ձեռք կրե-
րեն, այդ զեպքում վերջապես կզա արգեն ժամանակն
իրականացնելուն աև ճանապարհորդությունը զեպի լուսինը:
Կկառուցեն խոշոր նավի մեծությամբ մի հսկայական ռա-
կետ և նրա մեջ այնքան վառելանյութի պաշար կվերցնեն,
վորը կըավականացնի մինչեւ լուսինը գնալու և վերադառ-
նալու համար:

Անկասկած, կդառնվեն անվեհեր մարդիկ, վորոնց համար լուսնի վրա կատարվող առաջին ճանապարհորդության հետ կապված և վոչ մի վատանգ սարսափելի չեւ։ Այդ կինի մի ապշեցուցիչ ճանապարհորդություն և մարդկության գոյությունից ի վեր յեղած ճանապարհորդություններից ամենից զարմանալին ու ամենից համարձակը Յերևակայեցեք—մարդը զնուում է յերկինքը նվաճելու։

Զգիտեմ, կապրեմ յես արդյոք մինչև այն ժամը, յերբ
ռակետային նավը լուսնի վրա կհասցնի նրա առաջին
այցելուներին։ Բայց դուք, յերիտասարդ ընթերցողներ,
շատ հավանական ե, փոք կապրեք մինչև այդ ժամանակը,
յերբ յերկրագնդի ու լուսնի միջև կհաստատվի կանոնավոր
հաղորդակցություն։ Ով գիտի, գուցե և ձեզնից մեկն ու
մեկն ել ունենա այդպիսի ճանապարհորդություն կատա-
րելու յերջանկությունը։

Ի՞նչ ձեզ ե կատարվելու լուսնային թոփշը: Փորձենք
նայել դեպի ապագան և գծենք դեպի լուսինը և հակա-
ռակը ճանապարհորդելու հավանական պատկերը:

Յերևակայեցեք, վոր գուշ մի նեղ մուտքով բարձրացել
եք առկետային նավի նեղին խուզը և ձեր յետնից խնամ-
քով փակել եք կրկնակի դռները։ Դռների վրա և վոչ մի
անցք չպետք ե լինի, չե՞ վոր գուշ թուշելու յեք գատարկ




Նկ. 31. Հեղուկ լիցք ունեցող ապկետի փորձարկումը Դերմանիայում: Բախչիք
ամենաբարձր կետին հասնելուց հետո ապկետը ցած է իշխում պարտավորված:

տարածությունով, և յեթե մի ամենափոքրիկ անցք անգամ լինի, խցիկի ողը մի ակնթարթում կցնվի:

Դուք դեռ յերկրի վրա յեք գտնվում, բայց արդեն շրջապտից առանձնացել եք: Ձեզ ճանապարհ զցելու համար հավաքված ընկերների հետ այլևս հաղորդակցվել չեք կարող: Նույնիսկ հարավոր չե նրանց տեսնելու. լուսամուտների հաստ ապակիները դրսից ծածկված են, վորպեսզի յերբ նավը ճեղքում ե մթնոլորտը և դրանից սաքանում, ապակիները չհալվեն:

Բայց համենայն գեպս խուցը մութ չե. ներս մտնելիս դուք պտտել եք ելեկտրական ընդհատիչը և խուցը լցըել վառ լույսի ճառագայթներով. Մակետը դեռ չի սկսել իր թռիչքը, դիտեցեք ձեր նեղիկ բնակարանը: Պատերը, առաստաղը, հատակը—բլորը պատած են փափուկ կաշվով. յերբ հպվում եք զրանց, վոչ մի ցավ չեք զգում, կարծեք վափուկ ներքնակ լինի: Ուրեմն բոլորովին կարիք չկո վախենալ հրոցներից ու ցնցումներից: Սեղանը, աթոռները, փոքրիկ պահարանները և առհասարակ ամրող կահույքն ամրացրած ե հոտակին, զրանք նույնպես ցնցումներից չեն տուժի: Պատերին ամրացրել են տարորինակ գործիքներ: Ահա վահանը, վորի վրա դասավորված են ելեկտրաչափ գործիքները, կոճակներ, ընդհատիչներ և հատոցներ: Այդ բոլորը դուք չե՝ վոր պետք ե զեկավարեք, ձեզ հետ գալիս ե փորձված ոակետային սավառնորդ, վորն առաջին անգամը չե, վոր լուսնի վրա յե գնում և յետ գալիս հցում կան այնպիսի գործիքներ, վորոնք կլանում և մաքրում են ձեր արտաշնչած ողը: Կան նաև հեղուկ թթվածնով լցված ամաններ, վորոնց միջոցով լրացվում ե գործադրված թթվածնի պակասը խցիմեջ: Ինչպես տեսնում եք՝ ողի պակասությունից խեղդվելու վտանգ չկա, յեթե իհարկե ճանապարհորդությունը բարեհաջող անցնի և նշանակված ժամկետից շատ ավելի յերկար չտեմի: Այդ բոլորը մեզ համար նոր չե, վորովհետև սուրաբուտատի գոնդով նույնպես այդ ձևով ե կահավորված:

Բայց վհրտեղ ե մթերքների պաշարը: Ահա դեպի ներք նատունը տանող սանդուղքը: Դիտեցեք այդտեղ և դուք կտեսնեք արկղներ, տակառներ, պարկեր և փաթեթներ — ուրեմն սւտիլիքը բավարար ե:



Նկ. 32. Գյուտառքարների ջանքերով փոքրիկ ոռկետն ապագայում կփոխակենակ հակառակային նավի, վորով կաշելի յե գնալ լուսնի վրա:

Դեպի լուսին գնալու և յետ գալու համար կատարվող թոիչքը պետք է տեի յերկու շարաթ, իսկ լուսնի վրա յերկար չեք մնա, ուրեմն մթերքները կբավականացնեն։ Կերակուր յեփելու համար խցում հարմար ելեկտրական խոհանոց կա:

Պատոի վրա կախ են տված ինչ վոր արտասովոր հագուստներ, վորոնք նման են ջրասույզի հագուստներին և ժապավեններով կապված են։ Ո՞վ ե այդ հագուստը հագնելու, դժվար չե ալդ կռահել. հագուստը հենց ձեզ համար ե պատրաստված։ Հիշեցնք, վոր լուսնի վրա չի կարելի այնպես շնչել, ինչպես շնչում են յերկրագնդի վրա. այնտեղ ոդ չկա։ Խցից լուսնի վրա գուրս գալու համար պետք ե անպատճառ հագնել այս հագուստը, վորը պատրաստված ե ուստինից և գլխի համար մետաղե սաղավարդ ունի. Այդ ուռցնում են ոդով, վորը դուք կարող եք շնչել այդ ոդը թույլ չի տալիս, վոր ձեր արյունը դեպի դուրս գա։ Ժնացի ալդ, ձեր մեջքին կապված կինի խտացրած ոդով լցրա մետաղյա պայուսակ։


Ահա զալիս ե թոչելու մոմենտը։ Սավառնորդը խորհուրդ ե տալիս բոլորին պառկել զսպանակներից կախված մահճակալների վրա։

Դուք պետք ե անցկացնեք յերեք — չորս վոչ այնքան հաճելի բոպեներ, — ասում ե սավառնորդը։ Դիմացնք այդ բոպեներին, ամեն ինչ ձեր առողջության համար անվանգ կանցնի։ Պատրմատ եք։ Մեքենան բաց եմ թողնում։

Սավառնորդը մոտենում ե վահանի վրա դաստիքոված գործիքներին և բռնում ե մեկի կոթից՝ ուսկետային նավի վառելանյութը վառելու համար։

Մեքենական բաժնից լսվում ե խլացուցիչ աղմուկ, և միենույն ժամանակ ձեր մարմնի հետ ինչ վոր տարրորինակ բան ե կատարվում. նա կարծեք մի քանի անգամ ծանրացել ե։ Փորձեցնք շարժել ձեր ձեռքը կամ վորը, կարծեք նրանք կապարից են ձուլված։ Մարմինը մահճակալից բարձրացնելու համար ուժը չի բավականանում — այնքան նա ծանրացել ե։ Բայց վորտեղից ե այսպիսի ծանրություն։

Բանն այն ե, վոր նավի ուժգին թափով մեծացնելով իր արագությունը՝ թոչում ե դեպի վեր։ Քանի զեռ



Նկ. 33. Ապագա ոսկետային նավի մոտավոր ներքին կառուցվածքը։ Վերին մասում զեկավարման ֆուցն ե, նրա վրա գտնվում ե ծալված գրությամբ բողջապես մասը ճանապարհորդների խուցն եւ ներքնառուն ամպարաշյուտը։ Միջին մասը ճանապարհորդների խուցն եւ ներքնառուն ամպարաշյուտը մթերքներ պահելու համար։

սլանում ե, մահճակաները ներքեց դիմադրում են ձեր մարմին: ԶԵ վոր մահճական ամրացված ե խցիկին և նրա հետ միասին ձգտում ե ձեր մարմինն առաջ մղել: Յեվ հենց այսպիսով ներքեց ճնշում ե գործադրվում ձեր մարմին վրա: Այն ինչ ձեզ թուր ե, վոր իբր դուք ինքներդ եք ճնշում մահճակալի վրա և ծանրացել եք: Յեվ վոչ միայն ձեր մարմինը, այլև ուկետային նավի վրա յեղած բոլոր իրերը նույնպես ուժեղ կերպով ճնշում են, իրենց հենարանների վրա, ուրեմն նրանք ել ծանրացել են:

Դժվար ե չնչել, ձեր կրծքին կարծեք մի հսկա բեռ ե ծանրացել և ձեր սիրան ավելի արագ ե խփում: Արդյոք գեռ յերկար ե տեսելու այս գրությունը:

— Կես ըոպե ևս,—հանգստացնում ե ձեզ սավառնորդը,— և ամեն ինչ կանցնի: Դուք հիմա սովորականից յերեք անգում ավելի ծանր եք, իսկ փորձերը ցույց են տվել, վոր կարճ ժամանակով յերեք անգամ ծանրանալն առողջության վրա չի ազդում: Անա, արդեն նավը հասավ պահանջվող արագությանը: Յես ուկետի մեջ դադարիցնում եմ այրումք: Պատրամատ յեղեք մի ուրիշ անսպասելի բանի համար:

Լծակի մի շարժում—և կարծեք ծանրություն ասած բանը բոլորովին չի յեղել: Բայց այն, ինչ վոր դուք հիմա զգում եք, ավելի տարօրինակ ե, քան առաջինը: Դուք դրականապես չեք հավատում ձեր զգայարաններին: Դրա նման բան դուք յերբեցք յերազներումդ ել չեք տեսել, դուք ամբողջապես դադարել եք քաշ ունենալուց: Դուք ձեր քաշն ամբողջապես կորցրել եք, առանց վորեն մնացորդի:

Ի՞նչ տեղի ունեցավ: Հենց նոր միայն ձեր մարմինը դադարեց իր հենարանի վրա ճնշելուց: Ռակետի մեջ այրումը դադարեցված ե, և նավի արագությունն այլևս չի աճում, ինչպես հրազենից դուրս յեկող գնդակը, նա հիմա նետված ե տարածության մեջ: Քանի դեռ նավի արագությունն աճում եր, խցի հատակը բառացիորեն ձեզ ձգում եր և ներքուստ ճնշում գործադրում մարմինի վրա: Բայց հիմա թե դուք և թե խուցը թուչում եք մինչույն արագությամբ և, հետեաբար, մեկդ մյուսի վրա չեք հենավում: Յեթե դուք ձեր հենարանի վրա չեք ճնշում, այդ արդեն նշանակում ե, վոր դուք վոչ մի քաշ չունեք: Յեվ խցում յեղած բոլոր իրերն ել վոչինչ չեն կշռում:

Տեսեք, թե կատակի համար ինչ ե անում սավառնորդը: Նա ձեռքից բաց ե թողնում իր գրանի ժամացույցը, և վերջինս առանց վայր ընկնելու մնում ե ողի մեջ:


Դուք չպետք ե զարմանաք, վոր ժամացույցը գետին չի ընկնաւմ: Յեվ ինչու պետք ե նա ընկնի: Յերկրագունդն իհարկե ժամացույցը ձգում ե և դանդաղեցնում նրա թուիչը տարածության մեջ: Բայց նա ձգում ե նաև ամբողջ մեկը և թե մյուսը նա դանդաղեցնում ե միենույն չափով: Ժամացույցն ու խուցը սլանում են և, հետեաբար, հավասար արագությամբ, այսինքն վոչ մտանում են իրար և վոչ ել հեռանում: Այդ պատճառով ել ժամացույցը հատակի համեմատությամբ մնում ե անփոփոխ հեռավորության վրա: Յեթե դուք ել հիմա մի թեթև ցանկում կատարեք, կմնաք սղի մեջ: Դուք ուզում եք այդ փորձել: Հապա ցատկեցնք, և կտեսնեք, վոր ձեր զլուխը կկպչի առաստաղը պատող փափուկ կաշվին: Բայց այնտեղ դուք չեք մնա, նորից յետ կդնաք դեպի առաստաղը, և այսպես մնա, նորից յետ կդնաք դեպի առաստաղը, և այսպես միջև կճոճվիք:

— Բոնեցնք բոնակից, — գոռում ե սավառնորդը, այլ կերպ կանդ չեք առնիւ: Հաջողվում ե ձեզ խցի պատերին ամրացրած բոնակ-ներից մեկնումեկին կառչել և զրանով ձեր ակամա ճոճումը կանգ ե առնում:

Բացի այն մի քանի բոպեյից, վոր պետք ե գործադրեք լուսի վրա իջնելու համար, մնացած ամբողջ թոիչքի ընթացքում դուք ձեր քաշից զրկված եք լինելու: Այդ ժամանակ յերբեմն ստիպված կլինեք շուռ գալ և քայլել վոչ թե վոտների վրա, այլ ձեռներով: Յեթե բոնեք բոնակ-ներից, կարող եք կանգնած մնալ, հակառակ դեպքում լող կառպ ողում, այնպես, ինչպես ձուկը ջրում:

Բայց այնքան ել հեշտ չե ընտելանալ: ԶԵ վոր վոչ միայն դուք եք ձեր քայլը կորցրել, այլև խցում յեղած ըոլոր իրերը, Հենց վոր մի բանի յեք կպչում, նա պոկ ե ըոլոր իրերը: Հենց վոր միջով սկսում ե յետ ու առաջ գնալ-գալիս տեղից ու խցի միջով սկսում ե յետ ու առաջ գնալ- կավ ե, վոր սեղանները, աթոռներն ու փոքրիկ պահարան:

Ները պինդ ամրացված են խցի հատակին ու պատերին. հակառակ զեպքում նրանք ել ողի մեջ պետք ե լողալին. Ստիպված եք լինում յերկար ժամանակով ընկնել մի թերթ թղթի յետեից, փորը քիչ առաջ դրել եյիք ձեր կողքին. Այդ թուղթը փնտռելն ու բռնելն ավելի հեշտ չե, քան, ասինք թե մարդագետնում թոշող թիթեռը բռնելը, — ձեռքը մոտեցնելու ժամանակ ողի շարժումից թերթիկը թոշում ե մի կողմ: Իսկ յեթե ձեռքից բաց եք թողնում մատիտը, այդ գեպքում կարելի յե նրանից ընդմիշտ հրաժեշտ տալ.



Նկ. 34. Մի փոքրիկ ցատկում կտարելով՝ ձեր գուտեք կեցնէ խցի կտշեպտառաստաղին:

ողում թեթև բմբուզն ավելի հեշտ ե բռնել, վորովիետե յերկրագնդի մթնոլորտում նա գեռ ելի մի ինչ-վոր կղիռ ունի, իսկ մատիտն այստեղ պարզապես վոչ մի կշեռ չունի:

Հիմա ձեզ համար արդեն հասկանալի յե, թե ինչու ուակետային նավի կայանից վերցրած մթերքների մեջ վոչ մի սրսուռ մթերք չկա, ինչպես, որինակ, ալյուր, ձավար, սիսեռ և այլն: Բաց արեք այդպիսի մթերքով լցված մի տոպրակ, և ամենափոքրիկ հպումից, ողի ամենափոքրիկ շարժումից ամբողջը ցրիվ կգա խցի մեջ: Բայց չե վոր

նաև ստիպված պետք ե լինեք այդ կեղտոտված ողը չնչել, վորի հետևանքով հատիկները պետք ե ընկնեն շնչափողը և պետք ե սկսվի ջղածական հազը, վորը հեղառւթյամբ կարող ե խեղդվելով վերջանալ:

Դուք ուզում եք ջուր խմել: Մոտենում եք պահարանին և հանում այնտեղից բերանը պինդ փակած, ջրով լիքը սափորը: Հանելով կափարիչը, ջուր լցնելու համար սափորի բներանը քիչ թեքում եք բաժակի վրա: Բայց ջուր չի լցվում: Այս անզամ սափորն ավելի շատ եք թեքում, ամբողջապես շուռ եք տալիս — բայց բաժակի մեջ և վոչ մի կաթիլ ջուր չի լցվում: «Բայց արդյոք սափորի մեջ ջուր կա», — կասկածում եք դուք: Ծանրությունը փորձելով՝ վոչինչ չեք կարող իմանալ: ամանը լիքն ե, թե դատարկ, — այստեղ միննույն ե, նա վոչ մի օաշ չունի: Նայեցեք սափորի ներսը, այնտեղ ջուր կա: Նորից եք սափորը շուռ տալիս, բայց միննույն ե՝ վոչինչ չի լցվում: Դե, իհարկե, կարող ե արդյոք բաժակը ջուր լցվել յերբ ինքը՝ ջուրը վոչ մի ծանրություն չունի:


Բայց լավ, այդ բոլորից հետո ինչպես կարելի յե սափորից ջուր հանել: Սավառնորդը ձեզ խորհուրդ ե տալիս ափով խիել սափորի հատակին: Այդպես ել անում եք: Այդ ինչ է: Սափորից դուրս ե գալիս մի մեծ ջրային գունդ, մոտավորապես զգուռմի մեծության: Այս, այստեղ այդպիսի կաթիներ են գոյանում. քանի վոր սափորում ջուրը վոչ մի կշեռ չունի, նա ամբողջապես պետք ե հավաքվի մի կաթիլ մեջ:

Առանց յերկար-բարակ մտածելու, դուք ձեր շրթունք-ները մոտեցնում եք ողում կախված ջրի կաթիլին և աշխատում եք ներս քաշել ջուրը: Բայց հազիվ եք շրթունքը կզցրել կաթիլին, յերբ նա ամբողջապես ցրիվ ե գալիս ձեր յերեսին, պատում ե ձեր զլուխն ու շորերի տակով անցնում մարմնին:

— Վերցրեք, — ձախ ե տալիս սափառնորդը, արագ մոտենալով յերեսսրբիչով: — Իզուր շտապեցիք. յես հենց ուզում եյի ձեզ մի փոքրիկ խողովակ տալ, նրանով կարող եյիք, առանց սառը վաննա ընդունելու, այդ կաթիլից խմել: Այս, հեշտ բան չե այս տարորինակ աշխարհի բոլոր անակն-կաներին ընտելանալ, վորտեղ վոչ մի բան քաշ չունի և վոչ

մի տեղ չի ընկնում, մի աշխարհ, վորտեղ շուռ աված ափսեյից սուսպը չի թափաւմ, վորտեղ ձեր մարմինը բմբուլի նման մնում ե ողում և վորտեղ նույնիսկ հնարավոր չե մարդավարի ջուր խմել:

Դուք արդեն սկսում եք վախենալ, վոր այդ աշխարհում վոչ կարելի յե ուտել և վոչ կարելի յե խմել. կուլ աված պատառը մինչեւ ստամոքսը չի հասնի, այլ մնալու յե կես ճանապարհին, քանի վոր նա վոչ մի ծանրություն չունի: Բայց դրանից բոլորովին վախենալու կարիք չկա, վորովինետև կերակրի պատառը վոչ թե իր ծանրության



Նկ. 35. Կրկեսի մարզիկը զլիսիվայր կանգնած՝ ջուր ե խմում:

շնորհիվ ե համուռմ մինչեւ ստամոքսը, այլ մզկում ե կերակրափողի պատերովի: Յեթե այլ կերպ լիներ, արդ դեպքում յերեկարավիկի կենդանիներն ի՞նչպես պետք ե կարողանային ջուր խմել, ինչպես, որինակ, ընձուղար, վորը խմելու ժամանակ գլուխը ստամոքսից ցածը ե եջեցնում: Մենք հաճախ կրկեսներում տեսնում ենք այսպիսի մարզիկներ, վորոնք ձեռների վրա կանգնած՝ գլուխը դեպի վար. խողովակով ջուր են խմում: Այստեղ վոչ մի խարեյություն չկա, յուրաքանչյուր կում կամ պատառ հրվում ե գեպի ստամոքսը կերակրափողի պատի կծկումների շնորհիվ:

Ճանապարհորդության ժամանակը յերկարատեսում ե միապաղաղ կերպով: Ժամերն իրար յետեկից անցնում են, բայց յերեք ցերեկվան գիշեր չի հաջորդում: Արեն անդարբում կերպով ապահեպատ լուսամուտներից վառ ճառագալիքներ ե ներս թափում և այնպիս ատաքացնում ե ապահեպատ լուսամուտներից վառ ճառագալիքներ ե ներս թափում գործի գցել ելեկարական ջեռուցումը: Ընդհակառակը, չափից դուրս շոգ ե լինում և արդեն կարիք ե լինում խոցը զովացնելու մասին հոգալու: Սակառնաբը վերցնում ե հեղուկ թթվածնով լցված ամանը և շաղ ե տալիս սեյակին մեջ: Սոսկալի սառը հեղուկը նկատելի կերպով թարմացնում ե սենյակը և գոլրշիանալով ավելացնում ե սենյակի թթվածինը:

Մոտենում եք խցի լուսամուտին, վորակեսզի դիտեք, թե ինչ ե կատարվում յերկնային նավից այս կողմը: Տարրինակ բան. արել վառ փայլում ե, իսկ յերկինքը, ինչպես հարավային ամենամութ գիշեր, սև ե, և նրա վրա յերեսում են բազմաթիվ փայլուն աստղեր: Այդպես ել պետք ե լինի. յերկրագնդի վրայից յերկնքի կապույտ գույնը պայմանավորված ե միայն ողի ներկայությամբ. վորտեղ ոդ չկա, այստեղ յերկինքը սև ե: Նավի շրջապատում բոլորովին ոդ չկա, դրա համար ել այդտեղից յերկինքը սև ե յերեվում: Յեկ հենց ոդն ե պատճառը, վոր յերկրագնդի վրա յերեկ ժամանակ աստղեր շեն յերկում. նրա մասնիկները գեղի բոլոր կողմերը ցըռում են արևի ճառագայթները, վորոնք նսեմացնում են աստղերի թույլ լույսը: Յերկնային նավի շուրջն այդպիսի ոդային փայլուն ծածկոց չկա, և այդ պատճառով ել այնտեղ արևի լրիվ փայլի ժամանակ ել աստղերը լույս են տալիս:

Յեթե ուզում եք վոչ թե լուսամուտից, այլ զբառմ հիանալ յերկնքի տեսքով, այդ գեպքում կարող եք դուրս դալ նավից և պտույտ անել տարածության մեջ: Ի՞նչ ե, գուք զարմացնաք: Վախենում եք, վոր անդունդը կընկնեք, կամ ոդի բացակայությունից կվեղդվեք և կամ թե չե կսառնեք տիեզերական տարածության հավիտենական սառնամանիքց: Իզուր ե ձեր վախը, վոչ մեկը կպատահի և վոչ ել մյուսը:

Առաջինն այն, վոր դուք յերեք չեք ընկնի, վորովինետև գուք ընկել եք յերկնային տարածության մեջ նավի հետ

միասին և ամբողջ ժամանակ նրա հետ շարժվելու յեք, անկախ այն բանից, թե նրա ներսն եք գտնվում, թե գուրս եք յեկել: Յեկ վորպեսզի առանց վորևե նեղություն քաշելու նորից յետ դառնաք դեպի նավը, անհրաժեշտ է պարանով կապվել նավի հետ. բռնելով այդ պարանից՝ հեռացեք նավից: Ինչպես տեսնում եք՝ այս բանում վոչինչ չի սպառնում ձեզ:

Յերկրորդ՝ դուք չեք խեղդվի, վորովհետեւ հագնելու յեք ողով լցված շորեր և, բացի այդ, ձեր մեջքին ունենալու յեք խիտ ողով լցված պայուսակ:

Յեկ, վերջապես, յերրորդ՝ չեք մրսի, վորովհետեւ արել ճառագայթները ձեր հագուստի մեջ կտաքացնեն ձեզ, ինչպես վոր մինչ այդ տաքացնում եյն խցի մեջ: Համենայն դեպս մեծ զգուշության համար ձեզ հետ կարող եք վերցնել ելեկտրական ջեռուցիչներ, վորոնք լարերով կատված են նաև իլեկտրական մեքենայի հետ:

Այսպիսով յերրեք կարիք չկա վախենալ՝ նովից դուրս գալու համար: Հագեք «ջրասույցի» հագուստ (թերեւս ավելի ճիշտ կլիներ նրան «զատարակասույցի» հագուստ ասել), վերցրեք այն ամենը, ինչ զոր հարկավոր եւ զգուշությամբ բաց անելով խցիկի կրկնակի դոները՝ առանց վորեւ վախի ընկեք տիեզերական տարածության մեջ: Դուք կտեսնեք հիանալի տեսարան: Բոլոր կողմերից ձեզ շրջապատված են վառ փայլ արձակող բազմաթիվ աստղեր: Յերկնքի սև թափիշի վրա նրանք փայլում են թե ձեր գլխավերելը և թե ձեր վոտների տակ: Նրանք չեն շողշողում, ինչպես այդ յերկագնդի վրայից դիտելիս, այլ փայլում են հանգիստ շողով: Վորտեղ ող չկա, այնտեղ շողշողում չի կարող լինել: Սև յերկնքի վրա ցանված աստղերի բազմության մեջ անտանելի վառ շողում եւ արելը: Նա նման չե այն արեին, վոր մենք տեսնում ենք յերկրագնդի յերկնքի վրա: Նա դեղնավուն չե, կուրացուցիչ սպիտակ եւ ունի քիչ կապտափուն յերանգավորում: Նա շրջապատված է մի մարզարտանման շողով: Արեկ դրսի կեղեն ե այդ, նրա «թագը», վորը սովորաբար յերկրագնդի փայլող ողի հաստ շերտի միջով չի յերեսում: յերկրագնդի վրայից կարելի յե այդ տեսնել միայն արեկ լրիվ խավարման ժամանակ:

Յերկնքի վրա յերեսում ե նաև կիսաշրջանաձև լուսինը:

Նա նկատելի կերպով ավելի մեծ ե յերեսում, քան յերկրագնդից դիտելիս: Հասկանալի յե, թե ինչո՞ւ յերկնային ճանապարհորդության յերկարատև ժամերից հետո մենք արդեն բավականին մոտեցել ենք նրան:

Բացի լուսնից, յերկնքի վրա շողում ե նաև մի ուրիշ լուսատու, վոր նույնպես կիսաշրջանաձև ե յերեսում, բայց լուսնի նկատմամբ իր ուռուցիկ կողմով հակառակ կողմն ե դարձած: Նա ավելի խոշոր ե յերեսում, քան լուսինն ու արելը: Բայց այդ ի՞նչ նոր լուսատու յե: Ինչո՞ւ նրան յերկրագնդի վրայից յերբեք չեք տեսել: Հասկանալի յե պատճառը, դուք ինըներդ ապրել եք նրա վրա, և պարզ ե, վար նրան յերկնքի վրա չելիք կարող տեսնել: Դե, իհարկե հասկանալի յե, վոր այդ յերկրագունդն ե, վորտեղից դուք թոշել եք: Նա, ինչպես մյուս ըոլոր մոլորակները, շողում ե իր վրա ընկած արեկի լուսից, միայն նրանցից ավելի խոշոր ե յերեսում, վորովհետեւ դուք նրանից դեռևս բավականին չեք հեռացել: Ձեր սեփական աշերերով համոզվում եք, վոր յերկրագունդը, վորի վրա մարդիկ են ապրում, նույնպես յերկնային լուսատու յե, և վոր փաստորեն մենք բոլորս ել ապրում ենք յերկնքի վրա:

Գլուխներդ պառոյտ ե գալիս, յերբ ձեր հիացմունքով լի հայացքը գցում եք տիեզերական անսահմանության մեջ և, յերբ դիտում եք այդ տիեզերքի վեհ պատկերը: Նորություններով հօգնում ե ձեր տեսողությունը, և դուք շատ պում եք վերագանձի, յերկնքի և ձեր արտասովոր ճանապարհորդության մասին:

Այստեղ ձեր գլխում սկսում ե մի հարց պտտվել ինչո՞ւ, յերբ դուրսը պառոյտ ելիք անում, ձեզ թվում եր, վոր յերկնային նավը չի գնում դեպի լուսինը, այլ մի ինչովը յերկնքի ուղղությամբ: Յեկ իսկապես, նա չի թոշում այն ուղղությամբ, վորտեղ հենց հիմա լուսինն ե զանգում: Մի մոռանաք, վոր մինչև լուսինն հասնելը տեսլու յե վեց օր, իսկ այդ ժամանակի ընթացքում լուսինը կարողանում է անցնել յերկնքի վրայով իր ճանապարհի համարյա մի քառորդ մասը: Այն աեղը, վորտեղ վեց օր անցնելուց հետո նա պետք ե հանդիպի ձեզ, ճշգրիտ կերպով հաշված ե: Հենց դեպի այդտեղ ել գնում ե լուսինը: Այժմ լուսինն


այնտեղ չե, բայց նա չի ուշանում ժամանակին ներկայա-
նալուց:

Լուսինն ավելի խողոր ե դառնում: Նա ձեր աչքին
քանի գնում մեծանում ե. հասարակ աչքով նրա վրա
տարբերում եք այն բոլոր մանրամասնությունները, ինչ
վոր յերկրագնդից լավ հեռաղիտակով միայն կարող եյթք
տեսնել:

Մոտավորապես հարյուր ժամ թոշելուց հետո, յերկ-
նային նավի կապիտանը հայտարարում ե ձեզ, վոր դուք
վերջապես հասել եք, ինչպես նա յե արտահայտում, «Ճանա-
պարհի շրջադարձ կետին»: Նաման արդեն անցել ե ճանա-
պարհի ինստաներորդ մասը և այժմ գտնվում ե այն տե-
սեանելի սահմանի վրա, վորտեղ հզոր յերկրագնդի ձգողա-
կան ուժը հավասարվում ե փոքրիկ լուսնի ձգողական ուժին:
Այստեղ արդեն վերջանում ե յերկրի իշխանությունը և
ոկովում ե լուսնի իշխանությունը: Այդ ժամանակից ոկտած,
դուք արդեն վոչ թե քոչում եք գեղի լուսինը, այլ սկըզ-
բում դանդաղ և այնուհետև ավելի ու ավելի արագ ընկնում
եք: Յերեսուն ժամվա ընթացքում, այդպես ընկնելով, դուք
հանդիպում եք լուսնի մակերեսին:

Յեկ այսպիսով դուք արդեն ընկել եք մի այնպիսի
աշխարհ, վորը ղեկավարվում ե լուսնի կողմից, չնայած վար
գեռ նրանից քառասուն հազար կիլոմետր հեռու յեք գտնվում:
Այժմ արդեն լուսնի հսկայական շրջազիծը հարյուր անգամ
ավելի մեծ տեղ է բռնում, քան այդ տեսնում եք յերկ-
րագնդի վրայից: Հասարակ աչքով դուք տեսնում եք այդ
աշխարհի ողակաձև լեռներն ու հարթավայրերը: Ժամ առ
ժամ դուք ավելի ու ավելի յեք մոտենում լուսնին և
ավելի ու ավելի արագ եք սլանում:

Յեթե անկումն այդպես շարունակվի, այդ գեղքում
նավը խփելով լուսնի գետնին՝ ջարդ ու փշուր կինի:
Այդ հարվածը նույնիսկ ոդային բարձով ել չի մեղմացվի,
վորովհետև լուսինը մթնոլորտ չունի: Դրա համար ել յերբ
ուսկեային նավը բավականին մոտենում ե լուսնին, սա-
վառնորդը միջոցներ ե ձեռք առնում անկման կործանա-
րար արագությունը մեղմելու համար: Իսկ ինչ ե անում
նա: Նա ուսկետով նավը շուռ ե տալիս և նորից սկսում ե
վառելանյութն այրել. հիմա արդեն գազը դուրս ե դալիս



Նկ. 36. Ինչպես կերեա լուսնի մակերեսը՝ նրան մոտեցող սակեսային նավի
լուսամաւածից դիտելիս: Յերկրագնդից այդպիսի պատկեր կարելի յե տեսնել
միայն ուժեղ հեռաղիտակով:

գեպի լուսինը և զբանից նավի արագությունն ոկտում ե պակսել։ Ուրիշ խոսքով՝ սպառանորդը վարփում և ճիշտ այնպես, ինչպես շոգեկառքի մեքենավարը «հակա-շոպի» յե տալիս։ Այսպիսով համարյա առանց մնացորդի չքանում ե նավի արագությունը, և նա սահուն կերպով, առանց վորեև ցնցումի նստում ե լուսնի հողի վրա։

Վերջապես հասավ այդ մոմենտը. վայրեջքը կատարվեց բարեհաջող կերպով, և նավը նստեց լուսնի հողի վրա։ Դուք և սպառանորդը հաջնում եք «ջրասույզի հագուստը» և առանց վորեև տարակուսանքի դուրս եք գալիս խուցեց, վորպեսզի վոտներդ դնեք այդ նոր ու անծանոթ աշխարհը։

ՊՏՈՒՅՑ ԼՈՒՄՆԻ ՎՐԱ

Լուսնի վրա արած հենց առաջին քայլերը ձեր մեջ զարմանք են առաջացնում։ Չնայած դուք այլևս չեք թուշում յերկնային տարածությունով, այլ յերկու վոտներով կանգնած եք հաստատում գետնի վրա, բայց այստեղ նույնպես ձեր մարմինը նկատելի կերպով ավելի թեթև է, քան յերկրագնդի վրա յեր։ Դուք զգում եք, վոր լուսնի վրա ձեր քաշի մի զգալի մասը կորցրել եք։ Ամենափոքրիկ շարժումն անգամ անսպասելի հետևանքներ ե ունենում։ Այստեղ ձեր մի քայլը յերկրագնդի վրա արած վեց քայլի չափ առաջ ե տանում, ամենափոքրիկ ցատկումը ձեր մարմինը զետնից յերկու — յերեք մետր վեր և բարձրացնում։ Յեթե դուք յերկրագնդի վրա վագելով կարող եյթք մետր լայնությամբ առվից թոշել, ապա լուսնի վրա արդեն նույն ձեռվ կարող եք թոշել տասնությ մետր լայնությամբ կիրճի վրայով։


Բայց արդյոք նրա համար եք դուք այստեղ այդպես թեթևացել, վոր ձեր շորերն ողով փքված են։ Իհարկե վոչ լուսինը մթնոլորտ չունի, և նրա վրա ամենաթեթև իրը նույն արագությամբ ե ընկնում գետնի վրա, ինչպես վոր ամենածանր բանը։ Դատարկության մեջ բոլոր իրերը հավասարաշափ են ընկնում — այս և բնության որենքը։ Թեթևության պատճառը բոլորորովին այս բան ե. իսկապես այդ այն ե, վոր լուսնի վրա ձգողական ուժը վեց անգամ ավելի



Նկ. 37. Մակետով ճանապարհորդություն լուսնի հողի վրա։ Վորովինեակ լուսնի վրա առաջապահության մեջ գալիս անհրաժեշտ և ջրասույզի հագուստի նման վրա ող չկա, նաևից դուքս զգին անհրաժեշտ և ջրասույզի հագուստի գալիս հաջնել։

Նվազ ե, քան յերկրագնդի վրա: Այդ թույլ ե տռվս ձեզ լուսնային աշխարհում այնպիսի բարձր և յերկար ցատկումներ կատարել, վոր յերկրագնդի վրա և վոչ մի մարդիկ չի կարող կատարել, և ձեռքերով կարող եք այնպիսի խոշոր բեռներ բարձրացնել, վոր յերկրագնդի վրա ամենառաջեղ մարդն անգամ չի կարող տեղից շարժել:

Դիտելով լուսնի հողը, նա ձեզ ապշեցնում ե իր սև գույնով: Դուք սպասում ելիք, վոր լուսնի հողը կը նման սպիտակ կլինի: Բայց գիտնականները գիտեն, վոր լուսնի




Նկ. 38. Լուսնի սղակածն լեռները մոտեկից դիտելիս. Ողի բացակայության պատճեառ լուսնի վրա ստվերները չափազանց թունդ են, յերկենքը ու ե, վոր վրա ցերեկ ժամանակ բազմաթիվ աստղեր են յերեւաւ:

Հողը չի կարող սպիտակ լինել. Նրանք հետազոտել են լուսնի լույսը և համոզվել են, վոր լուսնի մակերնույթն իր վրա ընկած արեկի ճառագայթները պետք ե անզգադարձնի մոտավորապես այնպես, ինչպես անտառի հողը: Ապացուցված ե, վոր լուսնի հողի վրա ընկած ամբողջ լույսի միայն մեկ տասնչորսերորդ մասն ե անդրադառնում:

Բայց այնուամենախիվ դուք հարց կատար, վոր յեթե լուսինը բոլորովին սպիտակ չե, այլ մուգ-մոխրագույն, հապա ինչն զիշերներն այնքան պայծառ ե լուսավորում: Նրա համար, վոր նա այնուամենային ամբողջօվին ու չե-չե վոր նա իր վրա ընկած լույսի մեկտասնչորսերորդ

մասն անդրադարձնում ե և ուղարկում յերկրագնդին նույնիսկ արեկի ճառագայթներով վողողված ու թափիշը գիշեր ժամանակ յերկնքում սպիտակ լույսի փայլ կարձակեր և գիշերային մթության հետ համեմատած ձեզ չափագանց փայլուն կթվար: Հիշեցնք, թե ինչպես մասթ գիշերին, յել ավատմոբին անցնելիս լուսավորում ե հեռու ընկած մի սև ցանկապատ, նա չափազանց պայծառ ե յերեւաւ մեզ:



Նկ. 39. Երեկ խօվարում լուսնի վրա Արեւ անցնում և յերկրագնդի յետեւ. Կախված ե լուսնի յերկնքում բոլորակի ձեռով: Նրա տրամադիմք չոք գորը կախված մեծ և լուսնի տրամագծից:

Շուտով արդեն ձեզ համար զգալի յե լինում, վոր լուսնի վրա ցերեկ ժամանակ շատ շոգ ե լինում: Արեւ լուսնի վրայից ավելի մեծ չի յերեսում, քան յերկրագնդից, լուսնի վրայից ավելի մեծ չի յերկար որեք անընդհատ կիզում բայց դրա փոխարեն նա յերկար որեք անընդհատ կիզում է, դրանից ել հողն այնքան ե շիկանում, վոր վուսների ե, դրանից ել հողն այնքան ե շիկանում: Շուտով թագնվում եք համար անտառների յե դառնում: Շուտով դառնվում եք մերձակա սարի սովերում: Այստեղ զով ե և այն ել չափից դուրս գովի:

Ստվերում նստած դուք դիտում եք յերկինքը — լուսնի յերկինքը: Նրա տեսքը նույնպես արտասովոր ե, ինչպես և յերկինքը: Նավից յերեացող յերկինքը: Այստեղ նույնպես ուսկետային նավից յերեացող յերկինքը: Այստեղ նույնպես

պես ակ ե և ծածկված ե բյուրավոր աստղերով։ Լուսնի յերկրն-
քում փայլում ե մեր յերկիրը, շողում ե շատ վառ բոլորակի
ձևով, վորի տրամագիծը չորս անգամ ավելի մեծ ե, քան
յերկրի յերկնքում յերեացող լուսնի տրամագիծը։ Յեզ
յերկրագունդն ավելի պայծառ ե լուսավորում, քան լու-
սինը, վորովհետև նրա մթնոլորտն ավելի շատ արեւի լույս
ե անդրադարձնում, քան լուսնի մուգ հողը։

Բայց այս ինչ եւ Որն սկսում եւ մթնել: Միթե արել
մայրե մտնում: Վահ, նա գեռ յերկնքում շատ բարձր եւ յերե-
վում, բայց անցնում եւ յերկրագնդի յնտեղը, լուսնի վրա
սկսում եւ արեի խափարումը: Այդ տեսարանը մի կախար-
դական պատկեր եւ ներկայացնում: Յերկրագունդը շրջա-
պատվում եւ արյան նման կարմիր յերիզով. արդախի տեսք
եւ ընդունում մեր յերկրագունդը, յերբ նա յնտեկից լու-
սավորվում եւ արեի ճառագայթներով: Նախկին շոգից
դուք արգեն բավականին զովացել եք և այդ ավելի քան
հարկավոր եք: Լուսնի լեռան ստվերում արդեն սկսում եք
մրսել և ուղում եք նորից տաքանալ: Շարժվում եք տեղ-
ներիցդ և սկսում բարձրանալ լեռը: Վերելքը չափազանց
հեշտ եւ և այդ վոչ միայն նրա համար, վոր ձեր մարմինը
վեց անգամ ավելի պակաս եւ կըսում, այլև նրա համար,
վոր լեռնալանջը շատ թեք չե: Լուսնի լեռները սեպաձև
չեն բարձրանում, ընդհակառակը, նրանք շատ փռված են:
Իսկ յերկրագնդից հեռաղիտակով դիտելիս նրանք սեպաձև
են թվում միայն նրա համար, վոր շնորհիվ ոդի բացա-
կայության, լեռները չափազանց մութ և հատու ստվերներ
են պղում:

Դուք արդեն հասնում եք լեռնակատարին, վորտեղից
սկսվում ե վայրեջք զեպի խառնարանը և յերեսում ե,
վոր վայրեջքն ավելի զառիվայր ե։ Պարզվում ե, վոր ձեր
բարձրացած լեռն ողակաձև ե, ինչաղես նաև լուսնի լեռների
մեծագույն մասը։

ՎԵՐԱԴԱՐՁ

Յես այլես վոչինչ չեմ կարող պատմել ապագայում
դեպի լուսինը կատարելիք ձեր ճանապարհորդության
տպապավորությունների մասին։ Յես իվիճակի չեմ նկարա-


գրելու այն ըոլարը, ինչ վոր դուք իրականում լուսնի վճա-
թափառելիս տեսնելու յեք, և այդ շատ պարզ պատճառով,
վորովհետև յես այդ զփիտեմ: Վորպեսզի ամեն ինչ հնա-
բավար լինի պատմել, դրա համար անհրաժեշտ ե, վոր ինքը
պատմողն այդպիսի մի ճանապարհորդություն կատարած
լինի: Յեկ վորովհետև յես չեմ ցանկանում պատմություն
մոգոնել, այդ պատճառով ել այս բաց եմ թողնում և ան-
միջապես անցնում եմ այն մոմենտի նկարագրությանը,
յերբ դուք պատրաստվում եք վերադառնալ գեղի յերկրա-
գունդը:

Դուք կանոնավոր կերպով տեղափորում եք ձեր նկարած
լուսնի տեսարանների լուսանկարները (ճանապարհ ընկնելիս,
ինարկե, դուք ձեզ հետ վերցրել եք լուսանկարչական ապա-
րատ) և լուսնի բնությունից ձեր հավաքած նմուշները:
Վերագրառնալով տուն՝ դուք այդ նյութերից կկազմեք «լուս-
նային հավաքածո», փորը կզարդարի ձեր քաղաքային կամ
կոլտնտեսալին թանգարանի ցուցափեղկը: Վերցնելով այդ
բոլոր թանգարաքեք նյութերը, փորոնց մասին ներկայումս
գիտնականները միայն յերազել կարող են, վերադառնում
եք յերկնային նավի խուցը, փորպեսզի բռնեք գեպի մայք
յերկիրը առանող վերագրաքի ճանապարհը:

Նորից ե սկսվում ռակետի մեջ վառելանյութի այրումը, և նավալ արդեն պոկ ե գալիս տեղիցը։ Նա սկսում ե սրա-նալ դեպի յերկինք, բայց այս անգամ վոչ այնպիսի հակա-յական արագությամբ, ինչպիսի արագությամբ նու բաժան-վեց յերկրագնդից։ Այստեղ հարկավոր չե մեկ վայրկյանում տասնումնեկ կիլոմետր արագություն տալի կուսնի վրայից թռչելիս նավը պետք է այնպիսի արագություն ունենա, թուշելիս նավը պետք է այնպիսի արագություն ունենա, փոր կարողանա միայն նրան հասցնել մինչև «Չրջադարձի կետը», այսինքն լուսնի ձգողական ուժին զիմագրելով բարձրացնի մինչև քառասուն հազար կիլոմետր։ Իսկ զըս համար բավական ե ունենալ մեկ վայրկյանում յերկու և կես կիլոմետր արագություն։ «Չրջադարձի կետից» այն կողմ նավը ընկնում ե յերկրագնդի ձգողական ուժի ուն-մանը և արդեն սկսում ե ընկնել նրա վրա։ Դրա համար ել լուսնի վրայից թռչելիս յերկու և կես կիլոմետր արա-գությունը բավական ե, զորն այնուամենայնիվ ամենաու-ժեղ թնգանոթի արկի արագությունից յերկու անգամ մեծ ե,

Յերբ ոտկետի մեջ այրումը դադարում է, այսինքն՝ մի քանի վայրկյանից հետո դուք նորից կորցնում եք ձեր քաշը և նորից ընկնում այն փոքրիկ, բայց արտասովոր աշխարհը, վորտեղ վոչ մի բան վոչ մի կշիռ չունի։ Վեց յերկրային որ անցնելուց հետո դուք հասնում եք յերկրագնդին։

Մնում ե իջնել յերկրի վրա։ Այդ ավելի դժվար է, քան լուսնի վրա իջնելը։ Յերկնային նավն այնպիսի մի ահռելի արտգությամբ ե թոշում դեպի յերկրը (մեկ վայրկյանում




Նկ. 40. Թակեառվ ճանապարհորդները հագաքում են լուսնի բնության նմուշ-ներ հեռացնելու համար յերկու ոտկետային նավը

տառնումեկ կիլոմետր), վոչ միայն գետնին կամ ջրին զարնվելն և վտանգավոր, այլև մթնոլորտի մեջ մտնելը։ «Հակա-դոլորշիով», այսինքն ոտկետային նավի հակառակ ընթացքով այդ սոսկալի արագությունը վոչնչացնելու համար վառելանյութի չափաղանց խոշոր ծախք կպահանջվեր։ Այս պատճառով ել յերկրի վրա իջնելու ժամանակ սավառնորդը դիմում է մի բարվականին բարդ մաների։ Նա նավն այնպես ե ուղղում, վոր ոկզրում շփվի միայն մթնորդուի ամենավերին չափաղանց նոսր մասին։ Այս ողային թույլ արգելակը մի քիչ թուլացնում է նավի արագու-

թումը և ոտկետի ճանապարհը թեթև կերպով թեքվում է դեղի յերկիրը։ Սավառնորդը մթնոլորտի մեջ մտնելու անկյունն ու խորությունն այնպես ե հաշվել, վոր ճանապարհի վոլորքն ստիպում ե նավին յերկրագնդի շուրջը մի լայն ողակ գծել, վորը ոտկետային նավին ավելի յե մտաեցնում յերկրագնդին։ Այս անգամ արդեն սավառնորդն ավելի յե խորասուզվում մթնոլորտի մեջ և յերկրագնդի շուրջը գծեւմ ե յերկրորդ, բայց ավելի փոքր մի ողակ։ Յերրորդ անգամ արդեն միսկում ե յերկրագնդի ողային կեղեի մեջ և այնուհետև չորրորդ, հինգերորդ և վեցերորդ անգամ պտավելով ավելի ու ավելի յե խորասում և ավելի ու ավելի յե պակասեցնում նավի արագությունը։ Յոթերորդ սղակը գծելուց հետո նավի արագությունն արգեն այնքան և փոքրանում, վոր նա արդեն անվտանգ կերպով կարող է սավառնել յերկրին շատ մոտիկ ողի շերտով և իջնել գետին, իսկ ավելի լավ և ջրի վրա։

Ահա թե ինչպիսի բարդ ճանապարհով յերեան կգաք գուգ ձեր մայր յերկրի վրա։ Դեպի լուսինը և լուսնից գեպի յետ կատարվող թուիչը դիմում է մասնակի առաջան մարդկանց, վորոնք մաքի համարձակ շեցեք այն առնաջան մարդկանց, վորոնք մաքի համարձակ մարդկային մաքի այդ մեծ ու զարմանալի հաղթանակը բնության ուժերի վրա։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Հետաւ յի արդյոք մինչև լուսինը	5
Ինչ մեծություն ունի լուսինը	12
Լուսնի կառուցվածքը	17
Նվաճել յերկինքը	22
Թնդանոթից գեղի լուսինը	30
Ինչպես և ինչու յե թոշում ունեած	40
Ինչի համար են գործածում ռակետները	46
Հեղափոխական կիբալչիչի թռչող մեքենան	54
Ցիոլկովսկու ռակետային նավը	56
Արտասահմանի գյուտարարները	62
Խոօքից գործի անցնելը	64
Առաջին քայլերը	67
Նայենք գեղի ապագան	72
Պառւյտ լուսնի վրա	88
Վերադարձ	92



ԳԻՒԸ 1 Ա. 50 ԿՈՊ.

16712

На армянском языке

Я. И. ПЕРЕЛЬМАН

РАКЕТОЙ
НА ЛУНУ



АРМЕНГИЗ — ЕРЕВАН